

## ԲԱՆ ԱՂԵՐՍԱՆԱՑ

### ԲԱՆ ԱՂԵՐՍԱՆԱՑ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՄԴ Ի ՀԵՂԻՆԱԿԵ ԳՐՈՅՍ ՈՐ ԿՈՉԻ Ի ՔԱՐՈԶ ԳԻՐՔ

Կամ ջանակուր աշխատող սերմնացանին էր թէպէտ, զի իցէրս իբրև գշուշանափակն յարգելի, զիարկաւորապէսն ի յարգելի ասեր զկոյտ. ըստ ասից իմաստուն ըստոյն և նոյնածին արմատոյն, սակայն ըստ որում ի փղաբեր մօրէ հեղձուցեալ, հեղեղեալ յորդից կարի բաբախնեալ, և յաղոթիսն ևս անհարթում դիպեալ: Իսկ արտ ազատն փողոյ զի՞նչ փոյթ ոչ ի կենդանուցն էր մեռեալ: Այո՛, զե՞տ է լից թէպէտ զվայրն կրող, սակայն անախորժ քաց փորհուն դիտողաց: Կողկողազնեալ արդէն աղէտակիրն ինքնադատ զայս եւ եթ խնդրէ զի եթէ ոչ ըստ որումն եղելոց էր, զոնէ ի համարս ըստ նոյն և այլ ցանկալույն ասողից ընկալցի: Զի եթէ նա զտէրն, և այս տեսակ իրն օրացուցանէ: Եւ կամ թէ ըստ փայլագունին եթէ ոչ, զոնէ ըստ երկուրին (պ)սակիցի: Քանզի նայն եթէ վեհացեալ օզոստեանն կրէ զնշան, և սայս զնորայսն թաւաքոնամբ պահէ ապահով: Եւ կամ թէ՝ որ ընդ յառման գան գործողին իբր զկարմիրն այն յաբշեցեալ ի յանտառս էր ելոց, զոնէ ժողովրեանն իբրև զանհուն և զթերածաքն ի մարգարտաց տիհասունեաց՝ ի հաճոյս ընկալցի: Քանզի սապէսն է ըստ գոյին, որ ըստ հաւատումն է անչափ, նոյնպէսն ի յորդելոյն, որ առ մնացորդսն է մահու չափ: Որպէս վՃռեաց, որ տուօղն է անձներաց վարձուց, և գիտէ իսկ զարժանույն չափ: Իսկ զասացողքն աղէտիս յառեսցին ի հայելիս, մի գուցէ ընդ առ ունիցին զիշխանն մայրից (ոչ ըստ որում պահպանել, այլ ըստ որում) դիւրապէտ և խափան ական, զնմանէ զանց արարեալ՝ ջանան տքնութեամբ ապաւել զշիւղն մօրից յայլոցն երդից: Քանզի յանպիսեաց չէ այնքան է բաց՝ օրէնն իմանալեաց՝ անսուրբ ընտանեաց՝ ընդ վայր խօսողաց. ոյց յըստւերն ընթացից ջրհեղին բարւոյ յառելն միայն՝ անհետազօտէրին և ոյրին՝ սկսանին փոփոթալ և ընդվայր խօսիլ: Քանզի եթէ անսանավարի, անունն բանի՝ ոչ ընդ վայր խօսի ըստ կանխաւն բանի, զի՞ ապա ասունն ապատի զանունն բանի ունակն խոկման զխուփն երկփեղկեան՝ առանց ընտրութեան յերկիր ունիցէ: Բայց այսքան միայն, զի յորմէ ամենայն տայ իրաքանչիւր ըստ որպիսութեան, առնէ պիտանի և զամենեսեանս թէպէտ ոչ նոյնպէս և համանման:

Որպէս և հոտսն երկազօր երկտեղ աղամեանց անեղծ կանգնաւ և զայն հաստատէ: Այսինքն բոլորին ստեղծունք՝ յար գոյք և նկունք են միոյ ծնունդք և համասերունք, սակայն այլ և այլ՝ առ յայլ և առ յայլ յիւրեանցն : Քանզի անընդիմաձառք են և սայց բաղազանութիւնք: Ըստ այնմ նոյնն վեհացեալ և նուաստացեալ լի և կարօտեալս տէր և ծառացեալ, անգործ գործունեաց, մի միմեամբք հոգացեալք և անխրոխտք մնացեալք: Քանօն առնլու մեզ զսայցն՝ յորմէս և առ յորսդ, ձերբակալեսցուք ապա զնոյն տրոհելոցն զկապ. զտարակապելոցն զկիցս . զիակակայիցն զիամբոյր. զետ և զառաջանկատն դէտ. զերկանիշն զիծ, և զբանայեռիցն զարդ. քան զոր չիթ կարևոր երկագոյիցս բնութեան փորձառ և արատես լանջանկն վկայեաց: Որով տեսակաւորեցեալք շառագունազուրկ

պանծալ ունիցիմք նորացն գոյ՝ յորմէ և որով և յորում ամենայն: Որում միշտ փառք և պատիվ յահտեանս. ամէն:

Ընկալարուք ուրեմն, ո՞վ հոգեկից եղբարք իմ, և հարազատ որդիք Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, գերկս աշխատանաց իմոց, զգիրքս քարոզից, իբրև գերկուս լունայս խղճալուոյ այրույն (քանզի և այդր գոյի չափ կարն մեր): Զորև յերկուս յատորս բաժանեցաք: Որոց առաջին հատորն ունի զքարոզ [բաց է թողնված թիւը], որք են յաձախարանք և ձառակերպք և ներբողենակերպք ըստ ասացուածոց վարդապետաց. որպէս տեսանէք: Որք և ոչ ունին զյատկացեալ և զտարորոշեալ աւուրս ի տարւոց: Ուստի յորժամ և պատշաճեցին գործոյն և տեղույն և աւուրս, զորն և զորքանն կամիցիք և ախորժիցէք, առեալ ի գործ ածիցէք: Իսկ երկրորդ հատորն ունի զքարոզ [                ], որք են համառօտարանք և հարկաւորամիտք և են յատկացեալք ժամանակօք և աւուրբք տարւոյն. որք յիւրաքանչիւր յատուրս իւրեանց ասիլ պատշաճին, որպէս տեսանիք: Արդ՝ ի երկուս հատորս եղելոց բովանդակից թիւքն են [                ] քարոզք: Որք (թէ և ոչ այլոց) յատկապէս նուիրակացն սրբոյ էջմիածնի կարի պիտոյք են և յարմարք: Քանզի և ես ի բազմաժողով քաղաքն Կոստանդնուպոլիս ի գործս նուիրակութեանն սրբոյ էջմիածնի շարադրեցի զգիրքս զայս ի ներ թուոջն մերում ի ՌՄԵ: Որպէս ասացաւ հանդերձ պատճառսն ի յերկրորդի հատորի յառաջաբանութեանն:

Ուրեմն խնդրեմ ի յաննախանձ յեղբարցդ, զի ի պատահիլն ձեր՝ եթէ ախորժեսցիք ի սմանէ, զաշխատողս սրին զերկանցի Սիմէօն կոչմամբ ևեթ վարդապետս զմիաբանս սրբոյ էջմիածնի յիշեսցիք ի տէր: Որք և դուք յիշիջիք ի նմանէ: Որում փառք յահտեան:

### **ՆԱԽԵՐԳԱՆՔ ՔԱՐՈՉԻՑ, ՈՐՔ ՊԱՏՇԱՃԻՆ ՅԱՅՆՍ ՏԵՂԻՍ, ՈՒՐ ՔԱՆ ԶԱՍՈՂՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՏԱՆԻՑԻ, ԵՎ ԿԱՍ ՀՐԱՄԱՅՈՂ ԻՍԿ ՔԱՐՈՉՉԻՆ, ՇԱՐԱՀԻՒԵԱ Ի ՍԻՄԵՈՆ ՎԱՐԴԱՊԵՏԵ ԵՐԵՎԱՆՑԻՅ Ի ՌՄԴ (=1755) ԹՈՒՈՋ ՄԵՐՈՒՄ:**

Յայտ լիցի յարց և եղբարցդ իմոց, զի յամենայն յէակս գոյ կարգ և յաղորդողական բազազանութիւնք. այսինքն ոմանք առաջինք, ոմանք միջինք և ոմանք վերջինք: Կամ թէ՝ ոմանք պատճառք, ծնողք, յառաջածողք և հաղորդողք. իսկ ոմանք պատճառեցեալք. իսկ ոմանք պատճառեցեալք. ծնիցեալք, հաղորդեցեալք և յառաջացեցեալք: Քանզի ամենայն էակք ի ներում սրբացող իմիք կան կայացեալք ըստ մեծին Պրսկոյ. վասն որոյ ի հարկէ սիրայս՝ գոյ սկիզբն և յետին, առաջին և վերջին: Զոր օրինակ՝ ի սեռականագոյն սեռ գոյացութենէն, ընթացեալ մինչեւ ի յետին անհատ գոյացութիւնս՝ իբր սիրաց իմն է. իսկ այսորիկ սիրացի վերին սեռ գոյացութիւնն է պատճառ. հաղորդող, յառաջացող և առաջին. իսկ յետին անկատար գոյացութիւնն է պատճառացեալ, հաղորդեցեալ և վերջին: Ըստ այսմ և զմիջինսն իմա՝ պատճառ և պատճառեցեալ՝ առ վերջինս և առ ներքինսն: Այսպէս և զայլսն:

Արդ՝ ըստ (                ) և ըստ բանականի վճռահատութեան, որ վերջինն է և պատճառեցեալ, կարօտի և ցանկայ միշտ (                ) նիկ նոյն և պատճառին իւրոյ. նոյնպէս և ծնեցեալն ծնողին, զի ի նոցանէ ունին զգոլ և զկատարելութիւն իւրեանց, առանց

որոց ոչ ինչ են: Եւ թէ այսպէս, ուրեմն վերջինքն և ծնեցեալքն պարտին գոլ հնազանդ և հրամանակատար վերնագունից և ծնողացն իւրեանց. և որքան ինչ առաքմունք և ազդմունք առաքին ի նոցունց, ամենայնի հնազանդեալ և յօժարութեամբ ընդունիլ իբրև զկեանս և զկատարելութիւն ինքեանց: Զոր օրինակ ի վերնագոյն սեռ գոյացութեանն առաքէ և յառաջածի ներքոյ եղեալ գոյացութիւնսն. և նոքա ամենայնի յօժարութեամբ ընդունին յինքեանս իբր հնազանդ և հրամանակատար նորինս, քանզի եթե ոչ ընդունիցին, ոչինչ լինին և անգոյ: Ըստ այսմ նկատելի է և յամենայն կարգ գոյակաց. եթէ իմանալեաց և թէ զգալեաց: Արդ՝ եթէ զգալի և ի բնական եղելութիւնս գոյ այսպիսի կարգադրութիւն և կարգ, ինչպէս ցուցաւ, ապա որքա՞ն ևս պարտ լինիլ ի հոգևորականն և յԱստուածային իրողութիւնս, որ է մերս եկեղեցականի քահանայապետութեան, որ և է իբր սիրոյ իմն գեղեցկավայելու և աստուածացուցիչ ըստ մեծին Դիոնիսիոսի: Քանզի և ի սմա գոյ առաջին, պատճառ և հաղորդող ըստ կանօնի վերնագոնք սերի, որ է ծայրագոյն քահանայապետու մեր, որ յԱստուծոյ կացուցեալ՝ առաջին է և պատճառ ամենայն քահանայապետութեանս մերոյ: Իսկ այլքն ամենայն, այսինքն բնաւ եկեղեցականք՝ են պատճառեցեալք և ծնիցեալք. ուստի կարօտին և ցանկան միշտ վերնագունին իւրեանց. այսինքն՝ քահանայապետին և զգագաթանն ամենեցունց առ ի ընդունիլ զգոլ և զկատարելութիւն իւրեանց հոգևորապէս: Քանզի յետ աստուածապատկանին՝ ի նմանէ ունին ամենայնք եկեղեցականք զգոլ և զակատարելութիւն ըստ հոգւոյ՝ ըստ Դիոնիսիոսի: Եվ թէ այսպէս, ուրեմն պարտին և սոքա ամենայնքն գոլ հնազանդ ամենայնի և հրամանակատար ծայրագունք քահանայապետին իւրեանց, որպէս պարքառի և ծնողի: Նոյնպէս և որքան ինչ առաքմունք յառաջածին և ազդին ի նմանէ յինքեանս, ամենայնի հօժարութեամբ և հնազանդութեամբ պարտին ընդունիլ իբրև զգոլ և զկատարելութիւն ինքեանց հոգէպէս: Եվ թէ ոչ, ոչ կարեն կեալ ընդ կարգի և ըստ սահմանի իւրեանց, որպէս ցուցաւ: Արդ՝ այս իրականութիւնն և յիս տեսանի այսօր: Քանզի ի յերիցս երանելոյ հօրէս մերմէ (և ի ծայրագունէ քահանայապէտէս, որ է նախկին պատճառ և ծնող ըստ հոգւոյ մեզ ստորագունիցս), ահա՝ յառաջացաւ և առաքեցաւ ազդումն և առաքումն իմն առ յիմս նուաստութեան. այսինքն՝ ահարկու և անխոնարհելի հրաման. զի յարեան եկեալ սպասաւորեցից փոքր ինչ բանիւք և հոգեւորական բաժակօք աստուածահրավէր ուրեմն. որպէս ասացաք, մինչ անհնար էր ինձ անհանագանդ գտանիլ հրամանի վեհապետին մերում, վասն որոյ՝ հարկեցեալ ելի յայս հանդէս (որ ի վեր քան զկարն էր իմ), ուրեմն ապավինելով ի հոգին սուրբ և յաղօթս ձեր, մտցուք ի բուրաստանս Աստուածայնոց գրոց, հորոց և զարակաւագ ծաղկունս փնջեալ ընծայեցից ներկայացելոց բազմականաց:

ԴՐԱՅԻ ՆԱԽԵՐԳԱՆ ԱՅԼԻՒՆԱՊԻՍ ՄՏԾՈՔ Ի ՆՈՅՆՈՅ:

Յայտ իսկ է գերապատուելեացդ Աստուածետարանական Վարդապետութեան Տեառն  
մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ յորժամ կամեցաւ զի կոչից ի շնորհ  
քարոզութեան և յառաքելութեան Եմուտ ի նորա իբր զմարդասիրութեան  
ցուցեալ գեղանակ, իսկ յորժամ տեսեալ զօրութիւն հրաշից նորա,

զարհուրեցաւ յոյժ, վասն որոյ և անկեալ հօտս նորա՝ ասէ. ի բաց գնա իխնէն տէր, զի մերաւոր են ես. և նավն իմ ոչ է բավական տանիլ զքեզ քանզի զիրաշս մեծամեծս տեսանեմ ի քեզ, գուցէ նավն իմ անզօր ոչ կարիցէ տանիլ զզօրութիւն քո, անդրէն տարրածեալ քարկտիցի, և զիս ողորմելիս արասցէ: Ուրեմն ի բաց գնա, տէր, և այլն: Բայց մինչ յայսպիսի տագնապս և տարակուսանս կայր, իսկոյն լուաւ ի բարերարէն Յիսուսէ զմխիթարականն լուր և զիուսադրականն ձայն, թէ մի Երկնչիր, Սիմէօն, զի շնորհն իմ ընդ քեզ է. արկ գուրկանն վստահաբար, և այլն: Զի թէ շնորհ իմ ընդ քեզ լինիցի, ոչ լինիս ողորմելի, այլ փառաւորեալ, և նաև քո ոչ լուծանիցի, այլ ևս զօրասցի, որպէս և եղեն իսկ: Արդ՝ սոյն դիպուած և յիս տեսանի այսօր. քանզի սրբազն վեհս մեր կամելով՝ զի զանպիտանս ի շնորհս քարոզութեան կոչից է, իբր զենուրնարկութեան իմն ցուցեալ զեղանակ եմուտ ահա ի նավն իմ, այսինքն՝ խոնարհեցաւ ի լսել զմանկական բարեխաօսութիւնն իմ. և ես յորժամ հարեցայ ի հրաշալի դէմս սորին, զարհուրեցաւ յոյժ, և կալաւ զիս ողորումն. վասն որոյ և ես ընդ Սիմօնին այնմիկ՝ անկեալ հօտս սորին ասեմ. ի բաց գնա, տէր, ի բաց գնա յխնէն, աղաչեմ, զի անարժան եմ ես. ի բաց: Զի տկար միտն իմ ոչ կարէ տանիլ զտեսիլ քո ահարկու. ի բաց: Ծածկեա զճառագայթ արեգակնամնամ, զի Երկնչիր նշոյլ աստեղս փոքրական: Ի բաց: Զի հրաշալի դէմքս ոչ թողու բանալ զաջս մտաց իմոց: Զեմ բաւական առնուլ զքեզ ինաւ քարոզութեան իմոյ. Երկնչիմ զի գուցէ տկար միտն իմ ոչ բաւականացի տանիլ զներկայութիւն հզօրիդ. անդրէն քակտեալ գրուիցի և զիս ողորմելիս արասցէ, և այլն: Մնաց ինձ ուրեմն՝ ի քաղցրութենէդ հայցել՝ զի և դու տէրդ իմ առ յիս ձայնեսցէս զմի՛ Երկնչիրն յուսատրական, այսինքն՝ մի՛ Երկնչիր, Սիմօն: Զի աղօթք և օրինութիւն իմ ընդ քեզ է: Արկ վստահութեամբ գուրկանդ յորմէ և իմ վստահացեալ, հուսալով, յաղ քօրդ և եղբարցդ, արկից զմիտս իմ ի աստուածայինս, յորոց (թեև ոչ զմեծամեծ. և զգեղեցիկս, գոնէ զփոքունս և զվտիտս) առեալ մատուցից տեառնդ իմոյ անկարօտի և տեառնագումար բազմականացդ:

## ԴԱՐՁԵԱԼ ՆԱԽԵՐԳԱՆ Ի ՅՈՒՍԱՆ

Եղև բան տեառն և ասէ Արի և գնա ի քաղաքն ի Նիխնուէ և քարոզեսչիր անդ, և այլն ըստ գրոյն: Նկատելով Յօնանու ի ի քարոզն իւր, տեսանէր զի մահ էր նիխնուէացւոյն և մտածելով զողորմած գոլն Աստուծոյ ի զզօղացողացն՝ տեսանէր զուտ լինելն իւրոյ քարոզութեանն և մարգարեւութեանն: Վասն որոյ կայր ի մեծ վարանում: Ըստ Նարեկացւոյն ունեցաւ Յօնան զերկու մեծ վտանկս, մին լալոյ և միւսն կորստեան. մին գոնէ, և միւսն թերևս: Թէ լսիցեն և դարձցին, ստի, և թէ ոչ, մահացուցանէ: Վասն որոյ թէպէտ կամեցաւ փախչիլ, սակայն ոչ կարացաւ: Եւ այսպէս ունելով վերջապէս ազդմունս կարծողականս, իբր անձարատեալ զնաց ի Նիխնուէ. ընտրելով զվատահամբաւին և զվտանկ՝ անցին իւրոյ, քան թէ անհնազանդ գտանիլ տեառն իւրոյ: Ապա յելանելն ի Նիխնուէ, ունեցաւ անդ զմի ևս մեծ վտակ, որով մուռոցաւ զառաջինսն. այսինքն զտապս , յորմէ ասէ, ոգիք նորա, մինչ զի զմահ խնդրէր, վասն որոյ զանց արարեալ զառաջնովն՝ հոգայր զերրորդին. թողեալ

զառաջինսն, տանջիւր երրորդիւն: Ապա յայն տագնապին եհաս ի խնամոցն Աստուծոյ ի հովանաւորութիւն, որով հանգեաւ իբր թէ ի : Զսոյն պատահումն և յիս տեսանեմ այսօր, քանզի ել հրաման ի վեհապետէս մերմէ յիմս տկարութեան, թէ՝ «Արի և ել ի Նինուէ», այսինքն՝ ի յարեան. զի Նինուէ՝ գեղեցիկ թարգմանի, որ որ է ամենագեղեցիկատեանս այս: Եվ իմ ունելով զտագնապն ստութեան քարոզութեան իմոյ, և շառագունութեան երեսաց իմոց, գիտելով զտակարութիւն իմ, թէպէտ բազմիցս կամեցաւ հրաժարիլ և զանց առնել, սակայն ոչ կարացի, զի ոչ միայն ահարկու հրաման վերնագունին տանջեր զիս, այլև ծօվ և այլ արարածք, այսինքն հատի և եղբարք ահաբեկ արարեալ ստիպէին զիս հնազանդիլ վերնոյն: Ուստի և իմ անձարացեալ ելի յատեանս յայս վարանեալ մտօք: Եւ արդ՝ ունելով զտագնապն ամօթոյն, ունեցայ ևս զտագնապ մի մեծ, քան զառաջինսն, քանզի գիտութիւն իմ և կար որպէս մոմ հալի առ պայծառութեան ձերդ գիտութեան: Ուստի ահա հալիմ և տոչորիմ ի տապոյ արեգակնանման ձառագայթց հօր իմոյ մեծապատիւ եղբարցդ: Ուրեմն մնաց ինձ (տրտմել) հայցել ի ձենջ զդոմենին, այսինքն՝ զաղօթս ձեր ի հովանաւորութիւն տկարութեանս իմոյ, որով թերևս հոգի սաեւ կարողացայց ի սպասաւորել Աստուածիրաւէր բազմականացդ ի յշտեմարանէ հոգւոյն սրբոյ:

Յարմարեա և զընկդմիլն Պետրոսի, և զհարիւրապետինն թէ՝ չեմ բաւական: Եւ այլ շարք ըստ պատշաւորութեան, որքան կարես:

## ՔԱՐՈՉ ԵՎ ԱՍԱՑՈՒԱԾ ՍԻՄԵՈՆԻ Ի ՎԵՑՈՐԵԱՅ ԳՈՐԾՍՆ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ԲԱՆՆ ԴԱՒԹԻ, ԸՆԿԱԱՔ ԱԾ ԶՈՂՈՐՍՈՒԹԻՒՆ ՔՈ Ի ՄԵԶ ՃՈՂՈՎՐԴԵԱՆ ՔՈՅ

Ըստ սրբազան վարդապետաց և ըստ վճռոց փիլիսոփայից՝ յատկութիւն է ծայրագունի բարոյսն հաղորդել զինքն այլոց. քանզի կամի յօժարութեան զի ամենայնքն հաղորդեսցին ինքեան և լինիցին բարիք: Ըստ Պրոկոփի, թէ Ամենայն բարութիւն սիրէ զհաղորդութիւն և միացուցանէ զհաղորդեցեալն սայ ինքն և բարութեամբ: Վասն այսորիկ ըղձալի էից ասի բարութիւնն: Քանզի ամենայն էից կեցուցանօղ և պահանջօղ բնութիւնն է, որ միակցուցանէ և նոյնացուցանէ ի գոլ. որպէս և չարութիւնն բաժանելով և ապականելով կորուսանէ զնոյնացեալսն: Վասն այսորիկ բնականաբար ամենայն էակք բարւոյն ցանկան և ի չարէն խորշին: Գիտելով ըստ Պրոկոփի, թէ նախկին բարին կեանք է ամենեցուն, զորս և պահէ: Արդ այս նախկին բարին՝ ինքն գոլով հզօր զօրութեամբ՝ հեղու զզօրութիւն իւր և զբարութիւն ի յանզօր և յանբարի յարարածս. և հաղորդէ զամենայնսն իւրումն բարութեան անարգել կարողութեամբ, և ինքն մնաց անհաղորդ յանզօրութենէ արարածոց: Քանզի արարածքս հաղորդիմքարարչին կարողութեան, և ինքն ոչ հաղորդի մերոյս տկարութեան: Քանզի ընդ Պրոկոփի՝ Այս է յատկութիւն բարւոյն և պատճառին և

՝ զի սիրէ զշառաւիղս իւրոյ զօրութեան և կարողութեան ի պատքառելիսն՝ տալով և հաղորդելով ամենեցուն, և ինքն գերտարբերական գերազանցութեամբ մնալով անհաղորդ հեռանա և զանազանի ի նոցունց, որք յինքեսէ գոյացան: Վասն այսորիկ լիւրաւի ասի՝

յարարածոց անհասանելի և անպարագրելի և անգիտելի, և ինքեան միայնոց գիտելի և հասանելի ըստ մեծին Դիոնիսիոսի:

Առ յայս մտածելովՊօղոսի, հիացեալ ասէ. «Ո՞վ է, որք մեծութեանն և գիտութեանն Աստուծոյ», և այլն: Եվ սուրբ Դաւիթ ի պատմելն զմեծամեծ գործսն Աստուծոյ, թէ՝ Արար զմեծմեծս հզօրն, և այլն: Դառնայ հիանալով ասէ, Ո՞ խօսեսի զգօրութիւն Տեառն: Եվ ինքն Աստուած ասէ, որչափիեթի են արևելք յարևմտից, անչափ հեռի են ձանապարհը իմ ի ձանապարհաց ձերոց և խորհուրդք իմի խորհրդոց ձերոց: Եթէ այսպէս, ապա անկարէ արարածոց վերահասու լինի խորհրդոցն Աստուծոյ, և զանհասանելի գործս նորա՝ ի գիր արկանել և կամ բերանով քառել : Սակայն ըստ այնմ, որ ողորմութեամբ և անհուն բարերարութեամգբն իւրով գվոյացուցանէ ի յոշնչէ. և պահէ բազմատեսակ բարերարութեամբ, կարելի է, զընկալեալ ողորմութեանց և զպէպէս բարերարութեանց նորա զորս ընկալեալ վայելեմք, ըստ կարողութեան ձառել և փառաւորել մեծաւշնորհակալութեամբ. ընդ որում ոչ ինչ ունիմք հաստուցեալ գտրտուրն: Վասն այնորիկ և վարդապետի ըստ կարողութեան ձառէին զպէսպէս գործոցն Աստուծոյ ի լսելիս ժողովրդեան ի փառս բարերարին Աստուծոյ. որպէս և Դաւիթ ասէ. խոստովան լերուք ողորմութեանց նորա, և այլն: Ուստի ժև յայս բանի իբրու շնորհակալ լինելով զԱստուծոյ, ասէ. ընկալաք, Աստուած, զողորմութիւն քո ի մէջ:

Եվ մանաւանդ այսորիկ ողորմածի և բարերարիս Աստուծոյ ողորմութիւնն մինչ անձառելի և անպատմելի է ըստ այնմ ողորմութեամբ տեառն լի եղեւ երկիր: Վասն որոյ մեք աստանօր զքանիս զլխաւորս համաօտաբար ասացաք ըստ բարբառոց մարգարէիս, որ ասէ. ընկալաք զողորմութիւն քո Աստուած ի մէջ ժողովրդեան:

Արդ՝ ընկալաք նախապէս զողորմութիւնն Աստուծոյ ի ստեղծանիլն մեր յարաքաղործութենէն Աստուծոյ: Քանզի որպէս ասացաք, մինչ յատկութիւն է յայտագոյն բարւոյն հաղորդ զինքն այլոց, վասն որոյ ոչ ժումկալով միայն ի յինքեան ունիլ զանհուն բարութիւնն, յառաջ էած զբարերարական ձառագայթն ի յամենայնսն, և զամենայնսն ստեղծուածս բարիացուցանելով էացոյց և առատութեան ջուրցն՝ զեղու տալիս իւր յարտաքս և սփրէ յեզերս սահմանացն. և կամ թէ՝ որպէս զգերաբուղիս ակն աղբեր ոչ կարէ յինքեան պահել զյոլովութիւն գեղեցկարուեստ և զբարեհամ ջուրցն, այլ յորդեալ ի սաստկութենէն յարտաքս ծաւալէ: Ըստ այնմ վկայէ և սուրբն Ներսէս, թէ զիանդուրժեալ բնութեան բարւոյն է, և ամլն, քանզի ոչ եթէ վասն իւրոց յինքեան ինչ արար Աստուած զարարէս, այլ յինքեան գոլով անկարօս և ամենաբաւական, ամենափառաւոր և ամենաերանելի յինքն իսկ յինքեան, արար զարարածս, զի վայելեսցեն և սոքա զփառս և զբարերարութիւնս իւր: Որպէս և վկայէ սուրբն Դիոնիսիոս, թէ՝ Աստուածապատկան բարութեան գոլով յինքեան ամենազեղեցիկ և ամենաբարի, ոչ եթող մնալ յինքեան անծին զգեղեցկութիւնն և զբարութիւնն, այլ յառաջ էած յամենայն էսս ըստ ծնողականի զօրութեան իւրոյ զարբիւրելէնն զեղեցկութիւն և զարբիւրելէնն բարութիւն, որով արտածնեցաւ ամենայն էակք, եղեն գեղեցիկ էակք, եղեն գեղեցիկ և բարիք: Վկայէ և մեծն Պրոկրոս, թէ՝ ոչ է ընտանի Աստուծոյ պակասութիւն և ոչ կատարելութիւն, այլ

գերակատարութիւն, քանզի՝ որ պակասէ ինքն , զի՞արդ կարէ զայլս լցուցանել, իսկ որ կատարեալ միայն է, ինքեան միայն է բաւական, և այլոց ոչ կարէ տալ. վասն որոյ նախկին պատճառն գերակատարելով՝ տայ ամենայնի առատապէս ըստ ծնողականի օրութեան ներանցանելով յամենայնսն մշտնջենաւոր խնամօք: Վասն այսորիկ ասէ և Աստուածայինն զիր, թէ՝ գետ ելանէր ի դրախտէն, այսինքն յԱստուծոյ, և ուռոգանէր գերկիր. որ նշանակէ զանբաւ բարերարութիւնն սփռել յամենայն յէակս: Ուրեմն՝ այս սքարարի և ամենաքաւականս Աստուած, ոչ ինքեան միայն վայելել զինքն, յառաջ էած զբարերարութիւնն իւր ողորմութեամբն իւրով ի ստեղծագործել զամենայն արարածս, որպէս ձառէ մեծն մարգարէից Արարարծապատումն Մουկս՝ ասելով. ի սկզբանէ արար Աստուած գերկին և այլն կարգաւ: Արդ՝ վասն ստեղման աշխարհի բազումք մոլորեցան զպէսապէս հերձուածս խօսելով. քանզի ոմանք ասացին թէ՝ աշխարհս յաւիտենիցեղեալ գոլ. և ոմանք թէ՝ ինքն գոլ և ոչ յԱստուծոյ. զայսոսիկ հերքէ Մουկս ասելովն՝ ի սկզբանէ արար: Յորմէ յայտնի է, թէ՝ ոչ էր յաւիտենից, և ոչ ինքն եղ: Եվ այլք ասացին, թէ՝ արար, իսկ գերկիրս հրեշտակք. և կամ ի ձեռն հրեշտակաց. իսկ այլք ևս ասացին. Բ գոլ սկզբունք. բարի և չար բարիքն ի բարւոյն, և չարին ի չարէն յառաջենեալք: Եվ զայսոսիկ եղծանէ Մουկս՝ ասելով. Աստուած արար գերկին և գերկիր. որով յայտնէ, թէ՝ Աստուած միայն արար գերկինս և գերկիր և այլն: Ուրեմն ոչ ինչ է պիտոյ երկարել մեզ զբանս վամսն գազանացն ջախջախելոյ և այլն:

Արդ՝ նախապէս գիտելի է վասն անուանց Աւուրցն շաբաթու, թէ՝ որպէս և վասն է՞ր այսապէս կոչեցան քանզի անուանի այլոց վեց աւուրցն ասեցեալք ելին ի վերջնոյ յօրէն շաբաթու, որ կոչեցաւ շաբաթ, այսինքն՝ հանգիստ (վասն զի նմա հանգեաւ Աստուած յամ գործոց իւրոց՝ ըստ գրոյն): Այսու երանի, թէ սկիզբն ամենայն աւուրց է կիւրակէն, յորում սկսաւ Աստուած ստեղծանել զարարածս մինչեւ յօրս վերջին, որ է շաբաթն, յորում հանգեաւ: Իսկ առ այս և կոչեցաւ օրն կիւրակէի՝ միաշաբաթն, այսինքն՝ սկիզբն և նախորդն շաբաթու: Նոյնպէս և երկրորդն՝ երկու, և երկրորդն շաբաթու, նոյնպէս և միւսն՝ երրորդն, և միւսն՝ չորրորդն, և այլն կարգաւ: Ուրեմն յօրն, յորում սկսաւ Աստուած ստեղծանիլ զարարածս, էր միաշաբաթ (որպէս ասացաք), յորում աւուր էստեղծ Աստուած զչորս ինչս ըստ ձառեցմանն Մուկսի. այսինքն՝ զորեղէն երվինն հանդերձ իւրական զարդուքն. այսինքն՝ հրեշտակաց դասուքն ինանալի, լուսեղէն և անմահ, կատարեալ և անապական. ընդ նմին արար և գերկիրս. այսինքն՝ զչորս տարերու և զնիւթն աշխարհի առանց տեսակաց և կատարելութեանց. վասն որոյ և ասէ. աներևոյթ անպատրաստ. զի ոչ էր պատրաստ և զանազան կարգօք և տեսակօք զարդարեցեալ և տեսակաւորեցեալ, զորս յետագայ յաւուրսն ստացան: Բայց վասն երկնից ոչինչ ասէ անպատրաստ, զի ի յըսկզբան օրն ընկալաւ զլինիլն կատարեալ և զարդարեալ հանդերձ հրեշտակօքն, յորում և բնակվին: Ընդ երկնի հրեղինին և ընդ երկրիս ախթեղէնի և տարրիղինի էստեղծ նաև՝ զլոյսն գերապայծառս և արփիաքանչ, ըստ այնմ, զի ասէ, ասաց Աստուած՝ եղիցի լոյս, և եղև. Այս լոյս ստեղծանիլն՝ ծաւալեալ տարածեցաւ ընդ երկնիք ընդ երկրաւս՝ առանց անօթի և արգել չի. ի սմանէ գրկեալն և հեռացեալն կոչեցաւ խաւար և գիշեր և ոչինչ: Այս լոյս լուսաւորեաց գեղեալսն առանց ժամուց և ժամանակաց, մինչև ի յօրն չորրորդ. Այս լոյս եղև զարդ արարածոց և պայծառություն

Երևելեաց և վանիչ խաւարդ և խաւարահրաց. և որպէս այս լոյս յառաջին միաշաբաթիս պայծառազարդեալ զուարձացոյց զզգալի արարածն, և հալածեաց գխաւարն, և ի նմանէ զրկեալքն կոչեցան խաւար և գիշեր նոյնպէս և խորհրդապէս, Երկրորդի յորն, միաշաբաթի նորոգմանն աշխարհի, անեղ և արարչական լոյսն Քրիստոս՝ պայծառազարդեալ յարութեամբն ի գերեզմանէն, էլից և զուարձացոյց զտիեզերս ամենայն. յորմէ և զրկեցեալքն կոչեցաւ խաւար և խաւարասէրք. և հալածեալքն մնացին ի խաւարի, այսինքն՝ ի ձեռս սատանայի. և այլն:

Այս լոյս, որ ի յանեղ և յանմատոյց լուսոյ Աստուածութենէն եղև ստեղծեցեալ. ի յոչնչէ, եղև ճաճանչ և ճառազայթ Երկնից. շնորի արեգական, լուսնի և աստեղաց. առաւել պատկեր է ծանուցիչ ամենազօրին և Արարչին Աստուծոյ, և Բանին մարմնացելոյ նախագուշակ տեսլեամբ. ըստ այնմ՝ ես լոյս աշխարհ եղի. և այլն: Կոչեցաւ այս լոյս ջերմութեան և պարարտութեան բնութեանց գոյից. և տեսիլ և յայտնող գոյից և գունաց. նաև նշան ժամանակաց ամենասահման և սահմանադրող ամենայն փոփոխութեանց: Այս լոյս որոշէ զբարին և զբարեարեացն, զարդարն և զանարդարն և այլն տես: Զսա սիրողքն գովին և պարծին, և ատողքն պարսաւին և ամաչին: Եվ ի սոյնում աւուրս եստեղծ Աստուած զժամանակն, որ է չափ և կանօն շարժմանց ժամանակաւորաց. այսինքն՝ փոփոխականաց զգալեացս: Եվ յայտ է յայնմանէ բանէ, որ ասի, եղև Երեկոյ, եղև Վաղորդեան, օր մի: Բանզի թէպէտ՝ Արեգակն դեռևս ոչ էր, որ որոշէր զօրն և զժամն, սակայն նոյն լոյսն, զոր ասացաք, ըստ հրամանին Աստուծոյ, որպէս թէ յատկացուցանէր և զանազնէրզափ աւուրցն մինչև զօրն չորրորդ. յորում եղև արեգակն: Ուրեմն՝ Արարչագործն Աստուած յայսմ աւուր միաշաբաթիս, որպէս թէ՝ միայն զիհմն լայնածաւալ պաշտի Երկրիս էարկ հաստատունապէս ի վերա ոչնչի ըստ Յոթայ և զառաստաղնորին կացոյց և յօրինեաց ի յոչնչէ գիրեղէն զայն Երկին. և զլոսն և սորին հաստատեաց լուսովն ընդհանրածաւալ, զոր ասացի. իսկ զշատ և զշափ սորին որով չափի և կարգադրի կացոյց զժամանակն. զայսոսիկ միայն ասաց և եղեն, հրամեաց և իսկոյն հաստատեցան յոչնչէ, և կացին մնացին ըստ սահմանի իւրեանց Ամենակարօղ զօրութեամբ Աստուծոյ. որ Գ մասամբ ըմբռնէ զբոլոր գունտն Երկրի, որպէս ասի յիմաստութեան, և թէ աշխարհս ամենայն Աստուծոյ է իբրև զլէտ մի նժարից կամ կշռոց, և կամ իբրև զշիթ մի ցողոց որ իջանէ յերկնից, ըմտ այսմ և տես յեսայի, է ամենայն բաննա չէ բաւական յարումն և այլն: Ուրեմն, վերջապէս, այսոքիկ չորեքեան տակից Եղելութիւնքս, զորս ասացաք, որք եղեն ի յառաջին յօրն միաշաբաթիս, յորժամ ընկալան յԱստուծոյ յանբաւ զօրութենէն զգոլ և զլինելն իւրեանց ի յոչնչէ, տեսին և զսկիզբն իւրեանց ոչինչ և զվախճանն իւրեանց բարի (ըստ այնմ, թէ ետես Աստուած, զի բարի են) վասն որոյ Երկինն վերին ընդ Երկնայնոցն լուսեղինեաց և ընդ Երկրից նիւթեղենի, առեալ յինքեանց յայնակից զլոյսն պայծառ և զժամանակն գեղեցիկ Երգէին քաղցր Եղանակօք իբր շնորհակալ զԱրարչէն, թէ ընկալաք Աստուած զողորմութիւն քո ի մէջ ոչնչից և ոչ գոյացելոց, և այլն: Եկեսցուք այսուիետև յերկրորդ աւուրս գործ և ի յայն նկատեսցուք ի յողորմութիւն և ի բարերարութիւն Արարչագործին Աստուծոյ: Արդ՝ այս ամենակալն և ամենակատար հրամանն Աստվածային, որ յառաջնում յաւուր էստեղծ ի յոչնչէ զերկինս վերին և զերկիրս

Աերքին, զլոյսն և գժամանակն, նոյնն ասաց ու հրամայեաց յերկրորդումս յաւուր, թէ՝ Եղիշը հաստատութիւն ի մէջ գրոցդ, և այլն: Եվ քանզի յառաջնումն աւուր էստեղծ տէր զմեծանիստ ինամէջն զայն յորում զանպատրաստ և զանզարդ Երկիրս եղ իբրև զիհմն և զվերին Երկիրն կառոյց սմա իբրև զձեռուն և զառաստաղն որպէս ասացաք, և ի մէջ իհմնարկութեան և միջարկութեան վերնոց և ներքնոց՝ էր վիհ իմն մեծ անդունդ այն Առաջնաստեղծ ջրոցն յորոց վերայ խաւարն և ունայնութիւնն կայր դիզացեալ (ըստ այն՝ հաւար ի վերայ անդնդոց և այլն): Ուստի՝ յայսմ աւուր հարթէ, զարդարէ և կերպաւորէ զունայնութիւն զայն. քանզի այսօր էին՝ բաժանէ, զարուցանէ և ուրոյն ուրոյն կացուցանէ զանբաւութիւն ջուրցն կատակելոց՝ յերկուս բաժինս, այսինքն՝ զվաճչն, զուտն, և զնաքուրն վերացուցանէ առ յերկինս ի յօրինակ մաքրեալեաց անձանց, և յօրինակ մաքրելեաց անձանց, և զպլտորն, զթանձրն և զաղեմածն յերկրի թողու ի յօրինակ Երկրասիրաց և ի միջի այս Երկուց ջրոց՝ կացուցանէ զիհմատութիւնն, զի ընդ Երկնիւք և զերկրաւս սփրելով և տարածելով՝ անջրպետելով և տարածելով՝ անջրպետեսցէ զջուրսն վերին և զներքին քանզի հաստատութիւն ասի, սփրեալ տարածես [ցէ.վ.ն] պըռնկօղ և հաստատապէս անջրպէտ պահող վերնոց և ներենոց ջրոց. որ է աստղալից Երկինն ի ներքոյ հրեղէն Երկնի կատարեալ: Զի Երկին ասի, վասն զի զերկու ինչ ունի ի վեր քան զինքն, այսինքն՝ հող և ջուր: Դարձեալ Երկին ասի, զի այս Երկին Երկնէ ի մեզ ստորինս զզանազան ազդմունս, զպէս պէս նշանս. և զայլզայլ զզացմունս ի ձեռն Երկնայինս մարմնոց զորս ունի յինքն: Դարձեալ Երկին ասի, այսինքն՝ միջնորմն Երկուց, այսինքն՝ վերնոց և ներքինոց. իմանալեաց և զզալեաց և այլն: Իսկ վասն ջրոյն, որ ի վեր քան զսա մի՛ ին պակասիցիս. զի զոն բազումք վկայութիւնք ի գիռս սուրբ, թէ շարք, որք ի վերոյ քան զերկինս. որպէս և յայտ իսկ է ամենից (Եթէ կամիս, ասա և զվկայութիւնսն, նաև զերգն և այլն): Եթէ որպէս կարէ ջուրն ընդդէմ բնութեան կալ ի վերոյ Երկնից, մի՛ ինչ զարմանար, քանզի նա որ զգունտ ծանրագունի Երկրիս կացոյց առանց իհման ի վերայ ոչնչի նոյնն և կարէ զջուրն հեղուկ կացուցանել ի վերին տեղուց: Դարձեալ զի ոչ իսկ է ընդ դէմ բնութեան, քանզի այնց նրբից նոսրագունից շթոցն այն է բանական տեղի, որպէս և այս թանձրատեղոց և թաւացելոց ջրոցս, որք առ մեզ, ի բանական այս տեղի. զի ըստ Վարդապետաց՝ իւրաքանչիւրոյ իրի բանականն է այն է, զոր արար այն, յորմէ ամենայն չափ, թիւ և կարգ բնութեան: Աստանօր յայտ Եղև, թէ յերկրորդումս աւուր արար Աստուած զիհաստատութիւն միայն՝ զուրկ ի լուսաւորաց և ի զարդուց առ ի ընդմիջել և բաժանել զվերին և զներքին ջուրսն: Վերին մնայ ծածկեալ ի հաստատութենէ անգիտելի յըստորն այնոյս, և ներքինս ջուր մնաց խառն և տարածեալ, զերևութիւ և զերէսօք անզարդ և դատարկ Երկրիս: Զայսոսիկ ևս միայն՝ ասաց քանիւ և Եղեն և այլն:

(Եթէ կամիս, արա բարոյականապէս զվարդապետութիւն ըստ հաճոյիցդ): Ժամ է այսուիետն գալ ի յերրորդն յօրն, և ի նմա դիել զողորմութիւն բարերարին Աստուծոյ: Արարչագործ հրաման այն՝ որ բաժանեաց յանցելումն յաւուր զբազմակուտակ ջուրսն, ի վեր և ի վայր (որպէս ասացաք) և նոյնն և այսօր յերրորդի յաւուրս հրամայէ ասելով, թէ ժողովեսցին ջուրքդ, որք ի ներքոյ Երկրի ի տեղի մի, և Երսեսցի ցամաքն: Քանզի որպէս ամենիմաստ Աստուածն այն՝ զջուրն վերին հաստատեաց և սահման կացոյց ի տեղին յայն

բարձրութեան վասն նրբութեանն, նոյնպէս և այսօր զօրուրս ներքին հաստատէ և սահմանաւ փակէ ի խորխորատ և ի փոստրակ տեղիս վասն թանձրութեան ըստ բնականի կարգին: Ուրեմն բաժանէ աստանոր զօրուրս երկրի (որ խառն և խառն տարածեալ՝ կազմեալ ուներ զամենայն երես երկրի) ի ծօվս, ի գետորացս և ի յաղբիւրս: Եվ

զմասն ինչ ի ներքոյ երկրի, ըստ այնմ, թէ՝ երկրի ի վերայ ջրոցն և այլն: Եվ զմասն ինչ երսելապէս ի փոսս, ի խորս, և ի լեռնամէջս, ուստի ի ժողովիլ ջուրցն՝ երևցաւ ցամաք երկիրն, որ ծածկեցեալ էր ընդ ջրովն: Նոյնպէս զցամաքն բաժանեաց. զի զմասն ինչ յուրէք ուրեք վերացուցեալ բարձրացոյց ի հասարակ կիտէն ի լերինս և ի բլուրս ի պահպանութիւն և ի պարիսապ ծօվուց և գետոց. նաև ի յապահովութիւն և ի զուարծութիւն դաշտաց: Նմանապէս և զմասն ինչ ի նոյն կիտումն պահեաց ի բնակութիւն և ի շինութիւն մարդկանց. Նա և ի գործիլ և ի պտղաբերիլ. և ընդ ոտիւք անկանիլ:

Դարձեալ երկիր ասի, այսինքն՝ երկու իւր. ջուր և հող: Երկնը, այսինքն՝ երկնի, աշխարհի և կոխատի ուրից կենդանեաց հանապազ: Դարձեալ՝ երկիր, այսինքն՝ միշտ ի յերկիւլս. ինքն և բնակիչք զի ի վերայ ջրոյ և ոչնչի կայ, զուցէ անկանիցի ըստ Պօղոսի, որպէս և ի Դադան և յԱբիրսն. և այլն: Նոյնպէս և ծօվ կոչեցաւ, այինքն՝ բազմութիւն ջուրց: Դարձեալ ծօվ, այսինքն աղմուկ, և ամբոխումն. զի յար ի յամբոխուման և ի խռովութեան կայ. ի յօրինակ ամպարշտաց. ըստ այնմ, անօրէնք իբրև ծփեսցին, և ալիք իւրեանց և չարութիւնք ի գլուխ իւրեանց դարձին. և ոչ գոյ խաղաղութիւն անպատշաճ և այլն: Սոյնպէս և երկիրն ցամաք պտղաբեր և պարարտ ի յօրինակ բարեպաշտից, որք միշտ ի շնորհաց վերնոցն ոռոգեալք յառաջ բերին զպտուլս ցանկալիս և Աստուահաճոյս, և այլն:

Նմանապէս և լերինքն նման հպարտաց ուռճացեալ մայրօք զուրկ ի պտղոց և դաշտքն վասն խոնարհաց՝ պէսպէս բարեօք, և այլն այսպէս: Նոյնպէս աւազուտքն՝ թէպէտ դաշտք և ցամաք, սակայն անպտուիք, ըստ անուամբ միայն հաւատացելոց. Ըստ այնմ և ծօվն, թէպէտ շուիստ սակայն դառն՝ և լի պէսպէս զեռնօք ընդ եղերնագործ հաւատացելոց. զետք և աղբիւրք, բաց ի քաղցրութենէն, լինին ևս ուռջիք այլոց ըստ ողորմացոց և բարերարաց: Եվ զայլն այսպէս: Արդ՝ ծօվս այս՝ էառ իրաման և սահման, զի ալիք իւր ի յինքս ընդունիցի. և զսահման ոչ ևս անցանիցի յարտաքս ըստ Սողոմոնի: Եվ ընդ Յովբայ, և այլն:

Բայց ի հինգերորդ յօրն առնու զկատարեալզարդ և զգեղեցկութիւնիւր. այժմ միայն զտեղին գտեալ փակեցաւ սահմանաւ: Իսկ երկրի իրամեաց այսօր բուսուցանել և յառաջ ածել զամենայն դալարիս. զբոյս, զխոսու և զամենայն ծառս՝ ըստ գրոյն: Քանզի Արարչագործն Աստուած ոչինչ թողու ի յըստեղծուածոց իւրոց անզարդ. զի որպէս զերկինս զարդարեաց իմանալեօք զարդուք ըստ պահանջման բնութեան, նոյնպէս և զերկիրս զարդարէ այսօր ըստ մասին, ըստ իւրումն կարգի: Ուրեմն՝ բուսուցանէ այսօր երկիր՝ զամենայն տունկս բուսոց և դալարից ըստ իրամանին Աստուծոյ զի ի իրամայելն Աստուծոյ, իսկոյն բուսան և բողբոջեցան և լցին զերկիրս ի բնակից բուսականնաց իւրաքանչիւրոյն անհատ, ըստ կարգի բնութեան իւրեանց և ըստ սահմանի իւրեանց կատարելապէս. ոմանք ունելով զժաղիկս ըստ ժամանակիս, ոմանք զտերևունս, և այլք զկատարելիութիւնս ընդմիոյ

միոյ անհատիցնիւրեանց, սակայն ոչ ամենայնքն ունէին ի նոյնում ժամս զկատարելութիւն իւրեանց, այլ ըստ ժամանակին, որպէս ասացաւ: Եվ այնք անհատքն, որք ստեղծան ի սկզբան, առին և ընկալան յարաշէն զիրամանս յառաջածել զնոյնպէս անհատս ի ձեռն բնութեան իւրեանց ըստ օրինակի ինքեանց անթերի և կատարեալս ըստ սահմանի իւրեանց: Քանզի իրաման Աստուծոյ գործէ կատարյալ. զի զոր էստեղծ, միանգամ էստեղծ և կատարյալ. ըստ տեսակի և ըստ սահմանին: Եվ զայլս ոչինչ ստեղծանէ զնոր տեսակ, և կամ զայլ ինչ զի զնոյն իրամանն բնութիւնն իւրաքանչիւրոյ անյեղապէս պահելով՝ յառաջածէ միշտ զանհատս իւր անթերիս և կատարեալս: Այլ ոչ ըստ ոմանց, որք վասն հոգույն մարդոյն ասեն նորապէս ստեղծանիլ: Որ է՝ թիւր իմն կարծիք: Զնոյնս իմա՛ և զամենից կենդանեաց, բուսականաց և զմարդոյ յայսմ աւուր բոյսք և տունկք ըստ ազգի և ըստ նմանութեան իւրեանց ստեղծան ըստ անհարիցնկատարեալ՝ մեծութեամբ, սահմանաւ, և որպիսութեամբ, և զնոյնն պահին և յառաջածին անխախտ ի ձեռն բնութեան իւրեանց, ըստ այնմ, թէ՝ որոց սերմն իւր ի նմին ըստ ազգի, և այլն:

Արդ՝ բուսան խոտք ի ճարակ անասնոց և բանջարք ի պէտս մարդոյ, նոյնպէս և ծաղիկը և ծառք վասն մարդոյ և մարդն վասն Աստուծոյ. ուրեմն որպէս զնոսա մեք վայելեմք միշտ, և նոքա պահեն զկարզ և զսահմանս իւրեանց՝ ընկալեալս յԱստուծոյ, և ըստ ժամանակին ծաղկին, պտղաբերին և տան զիոտս ի վայելումն մեզ, նոյնպէս և մեք պարտիմք պահել զկարզ մեր, որ վասն Աստուծոյ եմք արարեցեալք. և ըստ ժամանակին պարտեմք տալ զպտուիս հոգլուրս և զիոտս և զծաղիկս ախորժելիս Աստուծոյ. զի մի՛ վատթար քան զնոսա գտանիցիմք. և լսիցեմք, թէ կտրեա՛ զդա. ընդէ՞ր, և այլն: Վայելչապէս ուրեմն ասի յաստուածաբանից, թէ՝ զարթի՛ր և հայ եաց շուրջ զքն, ով մարդ, և տես զբարերարութիւն Աստուծոյ առ քեզ, քանզի նայեա, թէ որպէս ի ժամանակս գարնան ամպք տեղան յերկիր ըստ կացուցման սահմանի իւրեանց, և երկիրն յընդունիլն՝ դալարիչ և բուսուցանել զբոյս ըստ ժամանակին, նոյնպէս և տես, թէ՝ բոյսք և ծառք որպէս յօրինին, կանաչին և պտղաբերին, և հուրունակըն տան զիոտս և ծաղիկս, և լերինք, և դաշտք և անտառք շքեղանան գեղեցկութեամբ. նոյնպէս գետք և աղբիւրք կարկաչահոս ոռոգմամբ առատանան ի զնաց. նոյնպէս զթշչունս զանազանս, որք արձակեալ հնչիւն զգեղեցիկ և զմայլեցուցիչ ծայնս ի զբուանս լսողաց. և զայլս այսպիսիս յորժամ լսիցես և տեսանիցես, վայելիցես և զուարձասցիս, մի՛ մոռանար զարարիչն նոցա, որ զայնս ամենայն վասն քո արար և զքեզ վասն ինքեան. զի որպէս դու զնոսա ըստ կարգի և ըստ իրամանին Աստուծոյ գտեալ միշտ վայելես, պարտիս և դու ըստ կարգի և ըստ բանականութեանդ սահմանի գրաւիչ՝ զի և Աստուած զմեզ վայելելով զուարձասցի և բերկրեսցի ընդ այնմ, թէ՝ ուրախ լիցի տէր յարարածս իւր և մի՛ զներիհակն գտեալ՝ տրտմեսցի ի քեզ և բարկասցի. ըստ Եսայ: Եվ ըստ աւետարանին. և այլն: Յարմարեա՛ ըստ հածոյիցդ: Այլև ի սոյն օր էստեղծ Աստուած զդրախտն և զարդարեաց ամենագեղեցիկ ծառօք և վայելչութեամբ, թէպէտ յետոյ : Նաև ի սոյնում էստեղծ զամենայն իրահալելիս և զպատուական հանքս, որք ի յերկիր յառաջ զան: Կերջապէս՝ Աստուած յայսմ երրորդի աւուրս հաստատեաց զծովս և զամենայն ջուրս. ըստ տեղույ և ըստ սահմանի իւրեանց. նաև՝ զարդարեաց գերկիրս ամենայն բուսօք և

տնկօք բաց ի կենդանեաց: Ասա և գեղգն Ներսիսի: և զորքն Շուկասու, Եթէ կամիս: Բայց զայս ամենայն միայն բանի էստեղծ և հրամեաց. որպէս և ասացաւ յառաջ: Եթէ կամիս, յիշեա զբնաբանդ:

Բեր ուրեմն՝ և զչորրորդ օրն, և ի նմա տեսցուք զողորմութիւնն Աստուծոյ:

Արդ՝ ամենաբաւական և անխոնարհելի հրամանն այն, որ զլայնատարած ծովս ի մի վայր ժողովեալ փակեաց սահմանաւ և գերկիրս մեծմեծանիսի զարդարեաց ամենազեղեցիկ բուսովք և զարդուք, Նոյնն և ի չորրորդ յաւուրս հրամեայեաց, թէ՝ Եղիշին լուսաւորք ի հաստատութեան և այլն: Քանզի նա, որ զամենեսեան զարդարէ իմաստութեամբ, ոչ եթող և զհաստատութիւնն (զոր յերկրորդի յօրն կառոյց) մնալ անզարդ. ուստի՝ և զնա զարդարեաց այսօր գեղապանծ և ամենասքանչ զարդուք լուսաւորօք. այսինքն՝ Արեգակամբ, լուսնօք և աստեղօք: Արդ՝ լոյսն այն պայծառատեսիլ, որ ստեղծաւ յառաջին յօրն, մինչև ցայսօր ցան ու ցիր կայր ծաւալեալ և սփրեալ ընդ Երկնուքն, որպէս ասացաւ յառաջ: Զնոյնն այսօր առեալ Աստուծոյ՝ ժողովէ յամանս լուսաւորաց, զորս կազմեաց այսօր նոյն ինքն, որպէս և զայլսն արարած: Բայց ի ընդհանրածաւալ լուսոյն յայնման՝ որոշէ զզուտն, զվիշտն և զպայծառագոյնն դնէ ի յաման, արեգակն, որ մեծագոյն, քան զայլսն է և իշխան տանջեան, որոց հարկադրէր ունիլ զպայծառն զձաձանձ արպեգակն լոյս: Իսկ զմիջին նուազ, քան զարեգականն, որ դնէ յաման լուսնի, որ փոքր է, քան զնա, և իշխան գիշերոյ: Եւ զայլ մնացեալսն, որք նուազագոյնք էին, քանզի զլուսնին, դնէ յամանս աստեղաց. զորս հարատեալ կարգէ և բներէ ի հաստատութեան, զի լիցին լուսաւորք Երկրի: Նաև լիցին, ասէ, նշանք ժամաց և ժամանակաց. աւուրց և ամսոց և այլոցն: Քանզի իսկապէս այսօր հաստատեցան օր և գիշեր, ժամք և չափք ժամանակաւորաց (թէպէտ ժամանակն յառաջնումն ասացաւ ստեծանիլ), զի արեգակն ըստ ընթացից իրոց յերկուտասան ամիսս լնու զշրջանն իւր և լուսինն ի յամիսս մի լնու գիւրն շրջան. այսինքն՝ հասանին ի յըսկզբան Եղեալ տեղին, որովք կարգին ժամանակք, ամիսք, շաբաթք, աւուրք և ժամք: Նաև ի վերնում կիսազմտի յերկրիս գոլով՝ առնէ զտիւն, և ի ներքնումն՝ զգիշերն: Նոյնպէս և ի հարավակողմն խոնարհելով՝ առնէ զձմեռն, ի հիւսիսակողմն բարձրանալով՝ զամառնն: Իսկ ի խոյն մտանելով՝ առնէ զզարումն, և ի կշիռն, զաշումն: Այլէ այսու տայ ևս արեգական զնշան Երկրագործության, յատման, սերման, ուղեգնացության և այլոց ամենից գործոց Երկրածնաց: Նոյնպէս և լուսինն և այլք աստեղք լինին նշանք և պատճառք հիւսնդութեանց, պէսպիսից պատահմանց. յորդութեանց ծօվուց, գետոց և աղբերց: Պարզութեանց և մրրկաց, և այլոց այսպիսեաց ազդմանց: Բայց հարկաւոր և վախճանական պատճառն սոցա է լուսաւորութիւն ըստ վճռոյ Աստուածանոյ հրամանին: Արդ՝ արար, ասէ, Երկու լուսաւորս մեծամեծս. ըստ վճռոց Արիստոտելի և Պրոկլի և այլոց փիլիսոփայից՝ ամենայն իր ի պատճառէն իւրմէ Ճարին Ճանաչի. քանզի որպիսի ինչ էր պատճառն, ըստ այնմ և յառաջ ածէ զպատճառեցեալն. ուրեմն Եթէզ կարեմք իմանալ և Ճարել զպատճառէն սոցա և կամ ըստ իմացմամբ արկանիլ, որ է Աստուած, կարեմք ապա և զլուսաւորս (և զայլ ամենայն արարածս ըստ իսկութեան, որպիսութեան իմանալ և Ճանաչիլ): Եթէ Աստուած է անհասանելի, ուրեմն և գործքն նորա: Որպէս ասի յԱրիստոտելէ, թէ յօր վախճանին ասաց, թէ՝ յամենայն աւուրս ոչինչ կարացի

հաւաստեալ գիտել. գրնէ և ոչ զբնութիւն միոյ փոքրագունի մժեռի: Արդ՝ եթէ և այնպէս, մեք զի՞նչ, և կամ որպէս կարենք ճառել զորապիսութենք լուսաւորաց, որք զարմանալիք են և հիանալիք: Արեգակն ասի, այսինքն՝ լուսոյ և արևու ակն. կամ աչք երկնից. զարդ աւուրց, բաշխիչ ժամուց, և ճառագայթ անշէջ: Դարձեալ՝ Արեգակն է անօթ և զործիք դարմանելի. պարծանք լուսաւորաց և լուսաւորիչ բոլորի աշխարհի: Նմանապէս և լուսինն, այսինքն՝ լոյս անօղ, կամ թէ՝ լոյս գիշերո սա կոչի ծիրանի երկնի, դշխոյ և սիրող արեգական. մխիթարութիւն Ճանապարհորդաց, ուղևորիչ գիշերանոց, սա ի աճիլ և ի նուազիլն նշանակէ զամենայն աշխարհային կենցաղաւարութիւնս, որք նմա Ենթարկեցեալք են, որ մերթ իբր քարոզ երեալ իրատարակէ զանկայուն կենցաղս այս, որ ոչ է փրկիչ, որպէս և արեգակն անփոփոխութեամբն քարոզէ ի վերինն ձգտող, որպէս ինքն ի վերն բազմեալ մնաց զուարթ միշտ և անփոփոխ: Վկայէ և այսմ Սաղմոսն ի յերկիխի: Դարձեալ՝ տես որպէս գովէ Արիստոտէլ զայսոսիկ, սակայն՝ զարեգակն և զլուսին. քանզի ասէ՝ զի՞նչ բնութիւն գեղեցկագոյն իցէ, քան զոցա, որոց բարին և կարգաւորն է մականուն, ըստ այնմ, զի բարի են և կարգադրող արարածոց, որպէս ցուցաք: Զոցանէ եթէ ոքկամեսցի ասել գովասանութեամբ, ի սոցանէ ասասցէ, այսինքն՝ քան զինքեանս գեղեցկագոյնս ոչ ունին յարարածս, եթէ նմա համենատելով գովեսցես: զԱրեգակնն ասեմ և զլուսինի, որք արագագոյն չափով զգեղեցկագոյն բոլորումն տան ժամանակաց յամէ ամ յամառն և ի ձմեռն, ի գարնանն և յաշունն, ի տիւն և ի գիշերն: Որք են պատուով գերագոյնք, շարժմամբ երագագոյնք, պայծառութեամբ պանծալի, զօրութեամբ անժերանալի և անապական: Արեգակն՝ զծովային կենդանիսն, զիետևակաց և զօդայնոց բնակութիւնսն բաժանէ, և չափէ զկեանս բնաւից իւրովն շարժմամբ. ի սմանէ յայտնին և ընկալնուն զօրութիւնս շնչաւորք և կենդանիք: Սովաւ խնամին և պահպանին, ի ջերմէ և ի ցրտոյ: Լուսին, որոյ իրաշափառ նորոգմամբ կարգին կատարելութիւնք, հողմոյ , երկնից ամ , զարմանալիյիւնաբերից հոսմունքն: Ի սոցունց չափաւոր խոնաւութիւն շնորհի երկրի. յորոց իրայինն բորբոքմունք կենդանաստեղծէ զամենայն: Ի սոցունց վերաբերեալ լինինյերկրէ՝ գեղեցկատեսակ տնկոցն սաղարթք. ջրով ոռոգեալք և իրով կենդանացեալք, ըստ ժաժամաւն սերիւն իւրեանց բումեալ բողբոջին. չորս սնուցեալ կատարեն և դարձեալ ժողովեն շրջաստեղծութեամբն, և առանց ծերանալոյ զբնութիւն էիցս պահեն: Սոքա և երբեմն շարժութեամբ թօթափին, հեղեղօք ողողին, և հրդեհութեամբ բոցակէզ առնին: Եւ յետոյ զի՞նչ ասէ գերազանց փիլիխոփայս Արիստոտէլ. այսինքն՝ ասէ. Այսոքիկ ամենայնքն թուի ինձ, թէ յառաջին բարւոյն լինի, որ զյափտենական փրկութիւնն շնորհէ ամենայնի: Զոր վերաբերեալ ասէ, քանզի շարժեալք յերկրէ վեր ելանենվերշնջութիւնք հողմոցն ուղղակի խոտորունակապէս, և դարձեալ նոյն երկիրն անձրւօք մաքրեալ և լուացեալ լինի յամ ժահահոտութեանց: Եվ յօդոյն նոյնպէս պարարտեալ ընդ իւրև՝ զամենավճիտ և անուշափուս առնէ: Նոյնպէս զսաշնամանիսն կաղացուցանեն, և սարինքն զտօթսն թօլացուցանեն. ի ձեռն որոց բուսեալ մասունքն ոմանք լինին և ոմանք ապականին. լինելութիւնքն լնուն զտեղիս ապականելոց, և ապականութիւնքն թեթևացուցանեն զլինելութիւնսն: Եվ յետոյ ասէ, այսպէս ամենեցունցն՝ ի միոյ բարւոյն և

փրկութեան յաւիտենական լինի շնորհեալ ոմանց յաղթելով, և ոմանց հաղթեցեալ լինելով: Եվ յաղթելով լինելով: Եվ զայլս այսպիսիս գիտ:

Եվ դարձեալ՝ բարոյականապէս, ասի ի յաստեղաբաշխից, թէ փոքրագոյնն ի յաստեղաց մեծագոյն է բազմապատկապէս քան զգունտս երկրի: Նոյնպէս և պայծառագոյն է լուսով, քան զամենայն լոյս և դամբարս երկրի: Նմանապէս և գեղեցկագոյն առաւելապէս, քան զամենայն գեղեցկութիւնս երկրի: Ուրեմն՝ մտածեա այսու զորպիսութիւն և գերջանկութիւն վերին գաւառին և ստորինս երկրի. զի եթէ մի աստղն փոքրագոյն այնքան ունի զգերագանցութիւնս առ երկիրս, ապա բոլոր հաստատութիւնն, որ յինքն ունի զամենայն լուսաւորսն, որքան իցէ: Եւ թէ նա այնքան, ապա պարունակօղն հաստատութեան իրեղէնն երկին, որ բնակարան է իրեշտակաց և սրբոց, և Աթոռ իսկ Աստուածութեանն անբովանդակելոց, արդեօք որքա՞ն իցէ մեծագունել, պայծառագունեղ և գերազանց գեղեցկագունեղ: Որ և Արարիչն և Աստուած այնր յաղացս զլուսաւորսդ դէմ յանդիման մեզ՝ յերկինս կացոյց և զձս մեր ի վեր ուղղեաց. զի ըստ ձևոյն մերոյ դէպ ի վեր նայիցեմք միշտ, և զվերինն համարիցեմք մեզ բնակութիւն ըստ Պողոսի. և մի՛ զիսակորեալ պատաղիցեմք ըստ զիսակոր անասնոց: Դարձեալ ասի ի բանաստեղծից, թէ վասն անորիկ արար Աստուած զլուսաւորսն բոլորակ ձևով. զի բոլորակ ձևն ոչ ունի զվախճան ի մէջ ձևոց. իբրու ցուցէ այնու ձևօք զկենցաղս երկնայնոցն գոլ առանց վախճանի յաւիտենական, և այնու յորդորիցէ զմեզ միշտ առ յաւիտենական կեանսն. ձգտիլ և նմա ցանկալ խոտելով զանցաւորս, քանզի բոլորակն, յորմէ սկսանի, և ի նոյն յանգի, անեզրաբար պատառնելով: Նմանապէս և երկնաքաղաքացիքն ոչինչ ոչինչ ունին զվեճն կենաց և երկանկուցեանց իրեանց, այլ միշտ նոր ի նորոյ սկսեալք և ի նորն ունին զերջանկութիւնս և զկեանս իրեանց ըստ տեսլեանն և վասն որոյ բարւոք ասի ի յօրինակաց, թէ ոմն մարդ գետեղիցէր ի հաստատութեան ի պարունակութեան փոքրէր աստեղ միոյ, և ի բարձրութեանն դիտեալ՝ նկարիցէր ի բնականութիւնս բոլոր գնտի աշխարհիս, իսկոյն հառաջելով աւաղէր և ողբայր զերկրաբնակս ասելով. ո՞հ, որքան փոքրագոյն է տեղին և նեղագոյն բնակութիւնն մահկանացուացն. ո՞հ, կիտին վայրկյանի, յորում սեղմին երկրածինքն. որքան անձուկ է և դժուարագոյն, և զուրկ բնաւից միսիթարեանց, յորում կաց առեալ պարաբերին մարմինքն երկրաքարշք: Ուրեմն այս հաւատի և ճշմարիտ գոլով՝ որքան իցեմք յիմարք և ողորմելիք մեք, որք թողեալք զայնպիսի լայնագոյն վարսն, գեղեցկագոյն և պայծառագոյն պալատսն, որ վասն մեր է պատրասցեցեալ, յայս անկայուն, նեղագունեալ և վշտալի վայրս ձգեալ ի սա հաճիցեմք բնակիլ. և սովաւ կամիցիմք շատանալ: Եվ զայլս այսպիսիս խօսեաց: Դարձեալ ըստ խորհրդականի մեկնութեան, հաստատութեան նշանակէ զեկեղեցիս Քրիստոսի. որ է հաստատուն սիւն ճշմարտութեան ըստ Պողոսի: Յորում Արեգակն է Քրիստոս, որպէս երգի ի յեկեղեցիս ի բազում երգս. և լուսինն է սուրբ Կոյսն Սարիամ, որպէս և այս երգի ի բազում տեղիս: Եվ աստեղին են ամենայն սուրբք՝ զանազանք և բազմատեսակք. զի որպէս ամենայն աստեղք և լուսին ի յարեգականէ լուսաւորին, նոյնպէս և հոգևորապէս սուրբք ամենայնքն ի Քրիստոսէ լուսաւորին ըստ իւրումն բանի. Ես եմ լոյս աշխարհի, և այլն: Ուրեմն նկատելի է վերջապէս, զի Աստուած զամենայն զոր ինչ արար, ի պատիւ և յօգուտ մարդոյ արար, որպէս

զի զնոսա յօրինակս յօրինակս առեալ կացութեան իւրոյ, նոքօք ուղղիցէ զինքն ի մի ծայրագոյն բարին և ի յարաշագործողն նոցա. զի ի տեսանելն զգեղեցիկ բնութիւնս և զանսխալելի կանօնապահութիւնս նոցա, և զինքն ուղղիցէ առ արարիչն իւր: Եվ զորքան գեղեցիկս և բարիս տեսանէ յարարածս, մի յառեալ զմայլիցի ի նոսա իբր կատարեալ և զմայլեցուցիչ. այլ փութով զմիտն անդրացուպանիցէ ի յարարողն նոցա մտածելով, թէ եթէ արարածն այսպէս, ապա արարիչն որպէս իցէ. քանզի յարարածոց ոչինչ է, որ ոչինչ կերպիւ կարիցէ քարոզել զանհասանելի գեղեցկութիւնն և բարօրութիւնն Աստուծոյ. և թէ բարտք մտածմամբ յառեալ զաշդ մտաց ի յէակս, զոցես զամենայն գիոք և քարոզք և հայելի ամենագեղեցիկ բարութեանն և կարողութեանն Աստուծոյ ըստ ասելուց ումենն, թէ՝ ընդհանուր էգիրք Աստուածութեանն, և այլն:

Եվ դարձեալ՝ այլիմնապէս, զի որպէս, ի չորրորդումս աւուր առեալ զանպարունակ և զսիրալի լայսն այն գեղեցիկ ժողովեաց ի յաման Արեգական, և ի նմա պարունակեաց, որով և լուսաւորեաց զարարացս, զգալապէս, նոյնպէս և ի չորրորդում դատողն Աքրահամն, նաև ի յետնումս չորրորդի աւոր յայտնեաց խորհրդապէս զնոյնն ի ծեռն Իսահակայ, և ի սուրբ կոյսն Մարիամ. յորում իբր յամանոց պարունակեցաւ անպարագրելի և անտանելի լոյսն Քրիստոս, որ և լուսաւորեաց զբանաւոր Երկիրս հոգևորապէս, որք նստէաք ի հաւատի և այլն: Ըստ վկայելոց գրոց Աստուածայնոցն: Ասա և զերզս Ներսեսի, Երկուտամբն, և զայն, զոր և կամիս: Եվ վերջապէս այս լուսաւորքս ևս միայն բանիս և հրաման Աստուծոյ եղեն և հաստատեցան ըստ այլոցն, և ընկալան զայսքան գեղեցկագոյն որպէս ցուցաւ: Վասն որոյ արժանապէս և սոքա ի լինելն իւրեանց առեալ զառածն Դաւթի՝ ասացին. ընկալաք հարաւի Աստուած ընկալաք զողորմութիւն քո յատկապէս մեք ի մէջ այլոց արարածոց, որք լուսաւորին ի մէնջ: Դարձարուք ուրեմն և ի հինգերորդ յօրն զբանս մեր տեսանելով և ի նմա զյոգնատեսակ ողորմութիւն բարերարին Աստուծոյ, որ աննուազելի բղխէ և ծաւալի առատաբար լնլով զերկին և զերկիր և այլն: Արդ՝ այն ամենասքանչ հրաման և ամենակատար զօրութիւնն որ զարդարեալ վայելչացոյց ըստ իւրոյ ամենահարուստ իմաստութեանն զերկին և զերկիր, ոչ եթող և ջրոց և ծօվուց՝ մնալ անզարդ և անպածոյց, վասն որոյ նոյն ամենազօք բանն և ի հինգերորդումս աւոր հրամայէ ջրոց՝ բխել և համել յինքենէ զտեսակս շնոց կենդանեաց, որք ի ջուրս, և որք ի յօդս, ըստ այնմ, թէ՝ հանցեն ջուրք զեռնս շնչոց կենդանեաց, և զթշունս, և այլն: Քանզի յառաջնում աւուր, որպէս ասացաւ, թէպէտ ստեղծան չորք տարերքն անուամբ Երկրին, յորոց հողն ըստ մասին եղև զարդարեցեալ բուսովք յերրորդ յօրն, սակայն ջուրն և յօդն միայն ըստ տեղւոյն առնելով զսահման, մնացին դադարկ, ունայն և մերկ ի զարդուց. զի ոչինչ ունէին յինքեանս զզարդս և զբնակիչս: Վասն որոյ Արարչագործն Աստուած և զնոսա այսօր զարդարէ պէսպէս զարդուք և զանզան կենդանի բնակչօք. զի զջուրս լնու լողակօք և պէսպէս զեռնօք, որք են համայն ջրակեաց և ջրասուն կենդանիք, որք ի ջուրս կենցաղաւարին. թէ սուրբք և թէ անսուրբք յօրինակ Երկրասէր և մեղասաթաւալ անձանց, որք թողեալք զերկրայինն միշտ ի տեղիս և ի խորս մեղաց զեռան և թաւալին, սեպիական համարելով յինքեանց բնակութիւն զծովասար աշխարհս): Եվ ի նոցումց ջրոյ հանէ դարձեալ զթեաւորս առ ի լնուլ զյօդս, որք են ամենայն թեւայերձ և յօդաճեմ թեւաւորք կենդանիքն, որք

միշտ ի յոդս կեան և կենցաղաւարին. թէ սուրբք, և թէ անսուրբք լի յօրինակ երկնախոհ անձանց, որի թէպէտ ըստ ջրայնոցն ի ջրոց գոյացան (որպէս ամենայն մարդիկը ի հողոյ) և ի յերկրէ կեան և սնանին ըստ կերակրոյս և ըստ ծննդեան, սակայն միշտ զբունուլն և շրջուն, և հրճումն նոցին ի յոդս լինի. որոց կարելի էր ասել, թէ զմարմնական պիտոյս ոչ ունիցէին, բնաւ ոչ իջանէին յերկիր: Ըստ այսմ և մաքրակեաց և երկնադէտ անձինքն, որք թէպէտ ի յերկրի կամ ըստ մարմնոյն և ըստ մարմնականի հարկաւոր կենցաղաւարութեանն, սակայն միշտ մտօք և խոկմամբ յերկինս են և ի յայն ձգտին, և զմայլին. որոց եթէ մարմնական պիտոյք ոչ իցէին, կարելի էր ասել թէ բնաւ յերկիրս և ի սմա եղեալսն ոչ հայէին. վասն որոց և Պողոս գանգատելով զմարմնոյն՝ ասէր. ո՞վ գերծուոցէ զիս ի սմանէ. և այլ, թէ՝ զյետոյսն մոռացեալ եմ. և յառաջադէմսն նկրտեմ: Եվ զայլ այսպէս յոլովք: Արդ՝ նկատելի է և աստանօր ի յամենահարուստ կարողութիւնն Աստուծոյ, որ յանշուշտ ջրոց զշնչաւորս և զանազան կենդանիս յառաջածէ. բայց մի՛ ինչ տարակուսիր և զարմանար, թէ որպէս կարելի է այս. այլ միայն տուր փառս անբաւազօրին Աստուծոյ և երկիր ի նմանէ. քանզի նա, որ զայս ամենայն գոյացուցանէ ի ջրոյ, կարէ նաև ի նոյնն կորուսանել զբնաւսն, որպէս առ Նոյի արար. զի նա ունի ի յինքն զշունչ և զկեան ամենայն կենդանեաց. և որպէս կամի, առնէ. չիք ինչ անհնարին առ կարողութիւն նորա: Ուրեմն՝ որպէս ասացաք վասն այցելույն, նոյնպէս և սոքա, այսինքն՝ ջրայինք և յօդայինք, ի հրամայիլն անխոնարելի բանին Աստուծոյ. իսկոյն բնաւից տեսակաց՝ լողակաց և թշնոց անհարքն՝ զանազան և կատարեալք ըստ տեսակի և ըստ սահմանին իւրեանց գոյացեալք և յառաջեկեալք ի ջրոց՝ լողակքն սկսան զեռեալ՝ լողալ, և կայթել ի ջուրս, որպէս և այժմս թշնունքն նոյնպէս իսկոյն բարձրացեալք ի յօդմ՝ թևատարած փետրազարդեալք, երփնաւորեալք, և նորաստտաց եղանելօք երգակցեալք սկսան պարիլ. թշիլ և խաղալ ի վերայ յօդոյդ, որպէս և այժմ. որք և ընկալեաք գօրինութիւնն Աստուծոյ՝ ածին և բազմանան ըստ կարգին և ըստ ժամանակին ի ծերն բնութեանց և ի տեսակաց իւրեանց ըստ անխախտ հրամանին Աստուծոյ: Յորոց ի զանազանս յատկութեանցն, և ըստ բնութենականի որպիսութեանցն իւրաքանչիւրոցն կարեն առնել զբարոյական վարդապետութիւնս, եթէ կամիցիս. քանզի ըստ սրբազանից վարդապետաց՝ ուսիիր, ո՞վ քրիստոնեայ, ի ձկանց և ի թշնոց զխրատ և զկանօն բարտոք կելոյ. զի զոր նոքա ունին բնութեամբ, դու կարես ունիլ ստացմամբ, որ արդինաւորի զվարգս, քանզի են օրինակք ի նոսա, յորս նկատելով քոյ, զգուշանալ և փախչիլ պարտիս, որպէս ի ձկանց՝ մեծին զփոքըն կլանիլն. և են, զորս ընտրել և ստանալ պարտիս. որպէս զգուշանալ պարտիս. որպէս զգուշանալն ի յորսորդաց, և ի ծոցամէջ տեղիս առնել զկացութիւնսն առաւել, քան ի հրապարակ և ի յայտնագոյն տեղիս. և զայլս այսպիսիս: Սոյպէս և ի թշնոց, առ ի մեղուաց զհանձարեղութիւն, ի կրնկաց՝ զարթնապէս հսկումն. ի յստագլաց՝ զարդարութիւն և զերախտագիտութիւն ի ծիծուանց՝ զյօժարութիւն առ նեղութեանն յուսով զարդուն. զի որքանիցս մեծաւ աշխատութեամբ թաթաւեալ ի ջուրս զինքն, և թաւալեալ ի յոդս, այնու շինէ զբոյսն: ի տատրակաց՝ զողջախոհութիւն, ի քաղցրախօսիցն հաւուց զիամեղաքանութիւնն և զպատշաճապէս խօսիլն: Յաքաղաղու՝ զըստժամանավին պաշտօնտարութիւնն: ի յարծույ՝ զբարձրաթօիչ լինիլ մտօք, և զստատեսութիւնն մինչև յերկինս և մինչև ի դժոխս յաղաւնեաց՝

զմիամտութիւնն: Եվ գայսպիսիս: Զի չիք ինչ յարարածս ըստ Ոսկեբերանին, որ միով կերպի տայցէ մեզ զօրինակ և զխրատ բարի. զի միայն վասն պիտոյութեան և վայելչութեան մեր արարան, այլև ի խրատ և ի յօրինակ բարեկեցութեան: Եվ դարձեալ՝ լողակաց և թռչնոց ստեղծանիլն ի ջրոց, բերէր զնշանակութիւն վերաստեղծութեան հաւատացելոց ի ջրոց յաւազանին. քանզի որպէս ի ջրոց ծնեալքն՝ ոմանք յերկինս բարձրացան և անտ զուարձացեալ իրձուին, և ոմանք ի խորս ջրոց մնացին և այնու հեշտացան նոյնպէս և վերածնեալքն ի ջրոյ յաւազանին, ոմանք ի յերկինս բարձրանան ընդ Քրիստոսի, և այնու զմայլին ըստ Պողոսի, թէ՝ մեր առաքինութիւնն ի յերկին է, և այլն: Իսկ ոմանք ի յաղեմած ծովու աշխարհս մնալով՝ այսու շատանան. ընդ այնմ, թէ՝ որոց Աստուածն որովայնն է, և այլն: Եվ յարմարեայ ըստ հաճոյիցդ, որքան և կամիս, ըստ այսմ մտացն: Քանզի որպէս սոքա ի հինգերորդ յօրս ստեղծան ի ջրոց, նոյնպէս և ի հինգերորդ դարումն Խրայէլ ի յամպն և ի ծովն հանցին մկրտութեամբ, ըստ Պողոսի, թէ՝ ամենայնքն ի Մօսէս մկրտեցան, և այլն: Յորոց սակալքն մտին յերկիրն աւետեաց, և բազումք ոչ: Ըստ այսմ մտաց և մեք ի յաւուր հինգշաբաթով հրչակի յիշեմք գերանելի Առաքեալսն, որք ի ծովու աշխարհս ի յերկնայինսն բարձրացան: Եվ այլն տես: Ասա՛ և զաւուր երգն Ներսեսի, երկու տամբն, և այլն: Վերջապէս՝ ուրեմն յայտ եղև, թէ ի յաւուր հիգերորդի համայնք տեսակք թռչնոց, որք ի յօդս, և ի բնաւք տեսակք լողակաց, որք ի ջուրս, գոյացեալք ի ջրոց, նոյնպէս միայն բանիւն և իրամանաւն Աստուծոյ: [Եթէ կամիս, յիշեա և զբնաբանդ, որպէս յառաջն ասացաք]:

Տեսցուք այսուիետև զվեցերորդ օրն: Եվ ի նմա զեղեալ ողորմութիւնսն Աստուծոյ բարեբանեսցուք: Արդ՝ ամենաբաւական զօրուորթիւնն և ամենաստեղծ բան այն, որ զամենայնն, զամենայնն, այսինքն՝ զերկին և զերկիր իբրև զկէտ մի ունի ի ձեռն, որ և միայն բանի և կամելով յառաջէած ի յոշնչէ, նոյնն և այսօր ի վեցերորդի յաւուրս ստեղծանէ զբնակիչս ցամաք երկրի. քանզի նա, որ զարդարեաց զերկինն վերին հրեշտակօք, զհատատութիւնն լուսաւորօք, զյօդն թռչ նօք և զծովն լողակօք, ոչ եթող մնալ և երկիրս զուրկ ի շարժուն զարդուց և ի բնակչաց. զի թէպէտ յերրորդ յօրն զարդարեաց ըստ մասին զսա բուսօք, սակայն ոչ էին շարժունք կենդանիք և արժանաւոր բնակիչք դեռևս, որք վայելիցէին զբոյս: Քանզի ի բուսոց, որք սոսկ խոտք անուանին, անասնոց և չորքոտնեաց եղեն կերակուրք և վայելելիք. իսկ բանջարք, ծաղիկք և ամենայն ծառք՝ մարդոց յաղագաւ, զորս այսօր ստեղծանէ ի բնակիլ յերկրի և վայելել զնոսա: Վասն որոյ հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի. չորքոտունի, սողունս, և զազանս ըստ ազգի, և եղև այնպէս: Ուրեմն՝ որպէս այլքն, նոյնպէս և սոքա. այսինքն՝ համայնք շնչաւոր և շարժուն կենդանիք, որք շարժին ընդ ինքեանց, քայլեն, սողան և կեան ի վերայ երկրի. թէ ի շէնս, և թէ յանշէնս, այսօր ի հրամայելն Աստուծոյ իսկոյն գոյացան և յառաջածան յերկրէ. ըստ ազգի և ըստ տեսակի իրեանց կատարեալք և անթերի՝ ըստ սահմանի իրեանց ի վայելել զերկիր. և վայելիլ ի մարդոյ, որ ընդ սոսա արարաւ, զոր ասելոց եմք այսուիետև: Արա այսուիետև զվարդապետութիւնս բարոյականս, եթէ կամիս: Քանզի որպէս ասացաւ վասն թռչնոց և լողակաց, որք այսօր արարան: Զի և ի կենդանիս ոչ ինչ կարես գտանել, յորմէ ոչ արտահանիցես զբարի և զօգտակար խրատ և զօրինակ բարեկեցութեան: Զի ըստ Երեմիայի, տատրակ, ծիծեռն, և

վայրենի ճնճղուկք քանաչին ժամանակս իրեանց, բայց ժողովուրդ իմ ոչ Ճանաչէ զդատաստան Տեառն: Վասն որոյ և Սոլոմոն նախատինօք զանկարգս առ մրջին առաք՝ ասելով. Երթ մրջիւնն, ով վատ, և այլն: Չորոց և գանգատէ ըստ Եսայեաց Աստուած, թէ եզն ծանեաւ զօտածիչ իր, և եզ զմսուր, և այլն: Քանզի ամենայն գազանք և ամենայն անբան կենդանիք ընտրէն զժամանակն օգտին, և զեղանակն շահավետութեան իրեանց, և դեղն հիւանդութեան իրեանց, որոց կենաքն են ըստ մարմնոյ և առօրեայ. և ոչ ունին զյոյս յարութեան և ոչ հատուցման գործոց. իսկ մարդն, գոլով բանական, հաւձարեալ, և ընտրող բարեաց և չարեաց, ունի զյարութիւն ակնակլութիւն, և կալ ի յատենի տալ զիամարս գործոց անբանացեալ, քան զանբանս, ոչ ընտրէ զժամանակն օգտին իրոց, ոչ զշահաւետութիւնն և ոչ զդեղն առողջութեան հոգլոց իրոց. որպէս ոմն ի սրբոց վարդա պետաց ասէ, թէ՝ գազանքն զիտեն և նտրեն զշահավէտս և զդեղս իրեանց, դու տգիտանաս դեղոց քումնէ, ով մարդ. զի՞արդ անբանքն իրաքանչիրքն գտանեն զինարն մաղձիցն, և մաքրութեան անձանց իրեանց, ոմն զխուս ուտելով, ոմն զծաղիկս, միւսն զկեղևն ծառոց, այլք զմանունս կենդանի, քան զինքեանս, և այլք հանելով յինքեանց զմորթն հնացեալ, այլք զկուրացեալն լուսաւորեն, և այլք զաննման ծագունս լիզելով նմանս առնեն, և այլք ըստ ժամանակինպատրաստեն զկերակուրս, և այլք յապահովս դմեն զբոյս, և այլք ճանաչեն և զիտեն զծնօղս և զերախտաւորն, և այլք այսպիսիք: Բայց միայն մարդն, ունելով ի ծերին զդեղն և զինարն առողջութեան և վերանորոգութեան զխոստովանութիւնն (և զայլն) անփոյթ առնէ, և զայլն տես: Որպէս և ոմն ի վարդա պետաց ասէ, թէ՝ անբան գառն ոչ մոլորի ի Ճանաչելոյ զծնօղն, քանական ոչխարն զիովիւն ոչ կարէ ընտրել հոտ: Նոյնպէս և անբանքն ոչ մոռանան զընկալեալ զերախտիսն, և միշտ պահեն, ջատագովին և սիրելով ծառայեն երախտաւորացն իրեանց, իսկ բանականն մարդ, մեծապէս ընկալեալ զբարիսն Աստուծոյ, վայելէ, և զփոխանակն անիրաւի ընդդէմ նմա: Փոխանակ պտղոյ բարութեան մատուցանէ ստեղծողին զփողս դառնութեան, և այլն ըստ կամ ացդ: Ուրեմն՝ վերջապէս ի վեցերորդ օրս, որպէս զանցեալսն, էստեղծ Աստուած զամենայն կենդանիս, որք կան յերկրի և շարժին տեղեաւ. սակայն նույնպէս միայն ասաց եւ եղեն, հրամայեաց և հաստատեցան:

Արդ՝ այսպէս և ըստ մեծին Արիստոտելի, բոլորիցն ասեմ բաղկացութիւն, երկնի և երկրի, և ընդ սոցին ամենայնի աշխարհի, ի ներհակացն խառնմանէ զարդարեալ և րազուգեալ եղիւ յօդաւորութեամբ, ի լեզուաց անձառելի և ի մտաց անհասանելի: Քանզի ապականիչք և թշնամիք իրերաց՝ հաշտեալք և միաբանեալք անքակտաբար զբոլորիցն յառաջածին զբաղկացութիւնս: Չորոց ասեմ ընդ զիջոյ, և ջերմի ընդ ցրտոյ, խառնեալք և միաւորեալք սքանչելապէս զարդարեցին զամենեցունցն զէութիւն. ի յօդոյ և ի հոդոյ. ի հրոյ և ի ջրոյ անանջատ և անշփոթ: Եւ նոյնն վերբերէ, թէ յորմէ զօրութենէ իցէ և յանբովանդակելոյ պատճառին զօրութենէ. որ զամենայն յառաջացէ զներհակացն միաբանութենէ, յորոց և հնարաւոր է զփրկութիւն և զգոյն ամենայնի: Ուստի՝ սոքա ամենայնքն մինչ եղեալք ստեղծեալք և բարիացեալք ի միոյ իսկականէ բարույն, և տեսեալ զինքեանս գոյացեալս և պէսպէս բարութեամբ զարդարեցեալս, և զանզանեցեալս ի յող գոյից, ամենայնքն ըստ իրաքանչիրցն բնութեան համեղանակ բարբառով սկսան շնորհակալ լինիլ զԱստուծոյ

գոյացութենէն. առնելով զառածն Դաւիթի, թէ՝ ընկալաք, Աստուած, զողորմութիւն քո ի մէջ ոչնչից և ոչ գոյացելոց: Ապա այնուհետև զի՞նչ. ըստ նիւսացւոցն՝ Արար Աստուած գերկինն իբրև զպալատս արքունի, և զգահոյս թագաւորական. գերկիրս և զյոդ իւրացնօքն հանդերձ լայնածաւալ ի սպասաւորութիւն պիտոյից. զդրախտն ի հրճուանս և ի զբունուլ. զլուսաւորսդ զանայօտ ի լուսաւորել (ըստ այնմ և զայլսն ասա):

Եւ կամ թէ՝ աշխարհս ամենայն իբրև զամենաբարի ընթիսարաան և իբրև զամենազուարձ խրախճանարան կերտեաց Աստուած. որք ամենայնքն առ ի պէտս, ի հեշտութիւնս և ի վայելչութիւնս էին պատկանաւորք: Արդ՝ ո՞յր յաղագաւ իցեն առքա և կամ ո՞վ իցէ վայելօն և տիրողն այսորիկ խրախճանարանի. մի՞թ ինքն ստեղծօնն, ոչ, քանզի նա անկարօս է յամենայնի, և ամենայնի լցուցիչ. և յափտենական փառաւորութեամբ ինքն յինքենէ փառաւորեալ: Ուրեմն՝ ի պատիւ և ի վայելչութիւն մարդոյն արա զամենայն, զոր հանդերձեալ էր առնել, որպէս և յետագայ բանիւն յայտ առնէ, ասելով՝ սպասուք մարդ ընդ պատկերի մերում, և այլովքն Որպէս և գեղեցիկ ոձով չքնաղաբանէ Ղուկաս, թէ՝ Այս երախան ընդհանրական, ձեռամբ էին պատրաստական, տեսակ բարեաց զարմանազան, լեզուաց մարդոյ առձառական. մի ըստ միոյ ճառել զորքան, ստեղծուածք չէին բաւական. բայց տակաւին ոչ էր իշխան, որ վայելէր զայս երախան: Արդ՝ անկարօս տէրն և իշխան, արար զմարդն ի տիա իւրեան. զոր և կացոյց տէր և իշխան ի վայելել զայս երախան: Քանզի որպէս ասացաւ յառաջ, թէ ծայրագունի բարւոյն յատկութիւն էյաղորդ զբարութիւն իւր այլոց, վասն որոյ՝ յետ ստեղծանելոյն զայսքան զանազան և պէսպէս բարիմ, ստեղծանէ ապա և զբանականս մարդ, զի վայելիցէ զոսա: Որպէս և գեղեցկաբանի ի բանաստեղծից, թէ՝ Մէր անկարոտ բարերարիդ, յաղթահարեացզանյաղթելիդ. Ետ առնել զմարդն ըստ պատկերիդ, ի վայելել զանձառ բարիդ: (Ասա և զերգն Ներսեսի): Ապաքէն այս ամենահարուստ և ամենաբավական բարիս Աստուած իբրև հատկեցեալ և հաղթահարեցեալ ի յիւր յամենազեղ և ամենառատ բարութենէն՝ կամելով ստեղծանել զբանանականս մարդ, զի վայելեայ զբարութիւնն իւր, ասէ՝ Արասուք մարդ, և այլն: Ո՞հ, հնազանդ խորհրդակցութիւնս և զարմանալի գործակցութենս. է արդարէ առիթ սքանչացման և հիացման, քանզի այս է անձառելի և անպատմելի եղանակ մարդասիրութեանն Աստուածոյ, որ զմիտ ափշեցուցանէ. անմտածելի կերպարան բարերարութեանն, որ զբանականութիւնս գերազանցէ. և անհետազօտելի ցոյց սիրոյն, որ զլեզուս յետս ընկրկէ: Որ և առ այս սքանչելի բարբառ ուրացեալ Պողոսի՝ ասէր. ո՞վ խորք մեծութեանն և իմս: Առ այս բարբառ զարմացեալ վերին զօրութեանցն՝ զառածն Դաւիթի առեալ՝ ասէին. ո՞վ է մարդ, զի յիշես և այդքան փառօք Ճիխացուցանես զնա (և այլն). քանզի ամենա և անքանակ երկինքն ամենայն իւրականն զարդուք, ըստ հողեղինաց, և մեծագունտ այս ընդհանրածավալ՝ ընդ իւրովքն ամենայն, և ընդ անյատակ ծօվուն ովկիանոս, միայն ասելով քո բանիւ, և հրամայելով՝ իսկոյն եղեն և հաստատեցան. որոց յաղագս ոչինչ խորհրդակցութիւն և ոչ նախաձառութիւն երկցուցեր, և ոչ բնաւ նա խապատրաստական ինչ ազդումն արարեր, ապա զի՞ է, վասն մարդոյս նուաստագունի և չնչին հողոյս խորհիս, նախանձայնես, թէ՝ արասուք: Ո՞վ կարէ ընդդէն կալ ամենազօրիդ, և կամ ի՞նչ կարէ արգելով զքեզ. կամ ո՞վ յորդորեաց զքեզ այդպէս առնել. և

ո՞վ յորդորեաց զքեզ ի յայդքան կառս բարձրացուցանել զմարդն. կամ ընդ ո՞ւմ խորհիս, զի արասց զքեզ խելամուտ. ոչինչ, և ոչ. այլ միայն դու, որպէս կամեցար և արարեր. եղիցին կամք քո օրինեալ և բարեբանեալ: Նկատել է ուրեմն ի պատուականութիւն մարդոյս. քանզի վասն սորա, իբրև զմեծագունի իրի ստեղծելութեան յառաջադրէ Աստուած և խորհրդակցի, զոր ոչ արար վասն այլոց արարածոց: Զի ըստ վարդապետաց՝ մարդն է մերձաւոր պատկեր Անեղի աշխարհին, այսինքն սրբոց երրորդութեանն, և նորին անհնոց արհեստի և իմաստութեանն վկայութիւն, նաև է վախճան և պարագրումն ստեղծեալ աշխարհիս: Վասն որոյ և ի Պղատօնէ կոչի եղերող բոլորակ ընդհանրութեան. քանզի ի յինքեան միաւորէ զվերին կիսագունտն, այսինքն՝ զերկինս և զիրեշտակսն. նաև զստորին գունտն, այսինքն՝ զերկիրս և զկենդանիս, զի մարդն յամենայն իրաց, այսինքն՝ յերկնէ, և յերկրէ, և յերկրէ, ի հոգւոց և ի մարմնոց զորպիսին ունի յինքեան բոլորակեալ: Ուրեմն՝ առանց մարդոյն եղեալքն ամենայնքն ցան և ցիր, և անհաղորդ միմեանց՝ յանկատարութեան և առանց վախճանի մնային: Որպէս և յայտ առնէ Պղատօն՝ ասելով, թէ՝ յետ առնելոյն Աստուծոյ զերկին և զերկիր, հրատարակեր առ յիմանալի զօրութիւն (այսինքն՝ առ էակից բանն իւր, և առ փառակից սուրբ հոգին), թէ՝ երեք սեռք մահկանացուք ևս պիտոյ է մեզ չև ևս եղեալք. որոց ոչ ելոյ. երկին անկատար. երեք սեռքն են ցանաքայինք, ջրայինք և յօդայինք որոց Տէրն զլխաւորն էր մարդն. յորոց ոչ լինելն սա է ոչ միայն երկիր, այև երկինն մնաց անկատար: Արդ՝ իրաւի մնայր երկին անկատար, ասիւր նաև երկինն անկատար՝ պարունակօղ գոլով երկրիս. և մանաւան՝ ո՞յր յաղագաւ լինիցէին ձառագայթք լուսաւորացն և կարգրադաբար ազդմունք երկնայնոցն, եթէ չիցէ մարդն: Երկրորդապէս՝ եթէ չիցէ մարդն, յորմէ առնուցոյր որդին Աստուծոյ զմարմին և կատարիցէր զնախասահմանեալն իւր փրկչական տնօրէնութիւն, որ ոչ միայն ի յԱստուծայնոյ բանից էր նախաձառեցեալ, այլև յարտաքնոյ փիլիսոփայից. որպէս և նախապէս իմաստասիրաց մեծն Վերգիլիոս, թէ՝ զերիս միութիւնս տեսանեմ յերկինս. յերից միութեանց մին ի մարմնի տեսանի, և յերից միութեանցն ոչ պակասի: Որ էր բան Աստուծոյ. որ գոլով մի յերից անձանց ի միութիւն Աստուծութեան, տեսեալ և երևեցեալ եղև ի մմարմնի մարդանալովն, սակայն յերրորդական անձանցն և ի միութենէ Աստուածութեանն ոչ պակասեցաւ և ոչ բաժանեցաւ: Երրորդապէս՝ մնայր երկինն անկատար, ըստ այնմ զի յարարածոցս ոչ ոք էր որ լնոյր զպակասութիւն իրեշտակացն և զդատարկութիւն տեղեացն անանկելոցս. զի միայն մարդոյս վիճակեցաւ այս պատիւ ըստ շարականին և այլոց վարդապետաց. լցէք զտեղի: Զորրորդապէս՝ եթէ ոչ լինիցէր մարդն, բովանդակեղեալքս, երկին երկնաւորօք և երկիրս երկրաւորօք ցանիցիր, զատեալ և որոշեալ գոլով ի միմեանց, մնային անկատար. զի յարարածոցս ոչինչ զտանիւր շաղկապ և միջնորդ և բոլորակող զանազանից, որ զանհաղորդ և զտարակացեալ ծայրն է մի շարաբերեալ և ի յինքեան համահաւաքեալ՝ իբրև զմի հայելի կարիցէր երևիլ բոլորից եղելոց. այլ միայն մարդս: Քանզի և վասն այսօր կոչեցաւ մարդս փոքր աշխարհ: Զի այսորիկ ըստ կազմուածոյն փոքր ստեղծուած իմն, ունի յինքեան ներկակեալ զբոլորիցն գոյութիւն, որպէս ի վերին ցուցաւ: Քանզի ունի զգոլն ըստ անշնչիցս զկեալն՝ ըստ բուսոց. զգալն՝ ըստ անասնոց. և զիմանալն՝ ըստ իրեշտակաց: Դարձեալ՝ ի չքնաղաբան փիլիսոփայից՝ իինգ զլխաւոր աշխարհ թունին

գոլ. այսինքն՝ նախատիա և անեղ աշխարհ, որ է Աստուած: Մեծ և եղական աշխարհ, որ երկին ընդ երկրաւս: Երկնային աշխարհ, որ է երկին: Զրահող աշխարհ, որ է երկիր: Եւ քաղաքական աշխարհ, որ է մարդ և կենցաղ նորին: (Եթէ կամիս, ասա զնմանութիւն իւրաքանչիւրնոցն սոցա առ մարդն ըստ Ղուկասու) և մարդն ունի զնմանութիւն ընդ ամենեցուն, որպէս և յայտնի է բանասիրաց: Դարձեալ աշխարհս է իբրև սրբազն և գեղեցիկ տաճար Աստուծոյ. յորում եղաւ մարդն իբր տէր և իշխան, և որպէս զքահանայ ամենայն ստեղծուածոց. զի վասն ամենայն բարերարութեանց և պարզեացն Աստուծոյ գոհացուցանէ զնմանէ. և նոքօք ի գութ շարիցէր զԱստուծ, զքարիսն յաւելացոյր և զչարիս մերժիցէր. և բարտօք մմատակարարելով՝ կոչիցիր հաւատարիմ ծառայ, և յետոյ յերկինս վերանցուցէր և զԱստուծով զմայլիցիր. քանզի որպէս աշխարհս վասն մարդոյ, նոյնպէս և մարդն եղև վասն Աստուծոյ. իբրև Աստուծոյնոց տաճարի և իրաց երկնայնող դիտող և գահակալ: Վասն այսորիկ և մարդն միայն ունեցաւ զբան, զի կարիցէր խօսիլ և ձառել զԱստուծոյ և զԱստուծայնոց: Ըստ այնմ մտաց ասէ և ոմն ի վարդապետաց, թէ վասն այնորիկ մարդն ի վերջոյ քան զամենայն ստեղծաւ, զի հնազանդեցուցանէր զամ աշխարհս, զերկրաւորս, զջրայինս, և օյօյինս. և իցէր տէր և բազաւոր ամենայն տարերաց. և սոքօք իբր աստիճանօք ելանիցէր առ վերին արքայութիւն: Իրաւի ուրեմն յետնագոյն ամենայնի եղև մարդն իբր վախճան բնութեան, և կատար գործոյ, և պատճառ աշխարհի սակս որոյ ամենայնքն, և սա միայն գտաւ բնակօղ յամենայն տարերս, քանզի ընդ զկանց լողաց. ընդ թռչնոց, թռչի, ի մէջ զազանաց կեաց. ընդ իրեշտակաց իմանայ. և յուսայ Աստուծանալ. ի յերկրի բնակի և ի յերկինս զինու որի. վասն որոյ և յարիս տապալէ սահման, թէ՝ մարդն է ամենայն յամենայնի: Նաև՝ զծով վարէ. զերկիրս վայելէ. յօդով ճարակիւ արեգական տիրի. զծկունս ըմբռնէ ի ծօվս. և թռչունս ի յօդս. և վերջապէս ժառանգ երկնից և ժառանգակից Աստուծոյ: Զայս ամենայն հաւատել կարէ երկրաւս, թէ իբրև զգթածագոյն մարդն ծառայէ քեզ ով մարդ զի ի ծնանիլն քոյ ընկալնու զքեզ. յետ ծննդեանդ տածէ ի տղայութեանդ կազդուրէ և յետոյ յորժան զերկիցիս յամենայնէ, նաև է ծնողացդ, մեծաւ սիրով գրկէ զքեզ և . զի՞նչ կամեցար և նա ներհակեցաւ. զի՞նչ սերմանեցեր, և նա ոչ հասոյց զբազմապատիկն. և կամ բայց սերմանելոյդ՝ զորպիսի բոյս և զանազան վայելչութիւնս առ ընծայէ քեզ: Քանզի Աստուած ի ստեղծանելն զմարդն՝ յայնպիսի արժանապատվութեան կացոյց զնա, զի բնաւ ստեղծուածք և կենդանիք երկրի հնազանդիցէին նմա, որքան մնայցէր նա հնազանդ ստեղծողին իւրոյ, ըստ այնմ, թէ՝ արասցուք մարդ ըստ պատկերի: Զի իշխեսցէ ձկանց ծօվու, և այլն: Որ և ի կամիլն, իսկոյն կատարեաց՝ ասելով. աձեցէք, և տիրեցէք երկրի, և այլն: Վասն որոյ եթէ մարդն ոչ էր ապստեամբեալ յԱստուծոյ, ամենայնքն մնային հնազանդ, որպէս ծառայ կամացն մարդոյն: Վասն այսորիկ և զամենայն էած առաջի նորա, զի ըստ հաճութեան կամաց իւրոց անուանեսցէ զնոսա: Եվ թէպէտ վասն անհնազանդութեան մարդոյն նուազեցաւ իշխանութիւնս, զի ապստամբութիւնս մարդոյն եղև պատճառ ապստամբութեան արարածոց, սակայն ողորմութիւնն Աստուծոյ ոչ էթող իսպառ զամենայնս ապստամբութեամբ. զի ընդ արդարութեանն խառնեաց և ողորմութիւնն, որովք ոմանք ի կենդանեաց դարձան ի պատիժ, որք են վայրենի զազանք, որք պատուին զմարդն. ըստ

Սիրաքայ. գազանաց ժամիք ետուր ի սպանումն ամպարշտաց. ոմանք մնային ի հնազանդութեան, չորս չորքոտունս և անասունս անուանէ, որք հնազանդին և ծառայեն մարդոյն ի պէս պէս կիրառութիւնս: Իսկ ոմանք ևս տուան ի դեղ տկարութեան, չորս սողունս անուանէ. յորոց կամին պէս-պէս շահաւէտ և օգտակար դեղօրայք (և այլն ըստ հաճոյիցդ): Բայց սակայն և այնոքիկ, որք ապստամբեցան և դարձան ի պատիժ մարդոյն և վասն մեղաց, նոյնք և յետոյ հնազանդեցան սրփոց և հնազանդեցելոցն Աստուծոյ, որպէս որք առ նոյնիւն կային ի տապանին անվնաս առ Եղիսէի առջքն. առ Դանիէլի առիւծքն. առ Պողոսի իժն. առ լուսաւորչաւն զանազան թունաւորք ի գրին (և յայլս յոլովս գիտ): Ուստի բարւոք մեղադրէ սուրբն Բարսեղ զմեղաւորսն ասելով, թէ՝ բանական կենդանի իմ, ով մարդ, և իշխանութեամբ ծնեալ. և կացուցեալ ի վերայ Երկրի. ընդէ՞ր իշխանդ ծառայ լինիս աշխարհի. և բանականդ անբանի որամայեաց քեզ Աստուած տէր լինիլ ստեղծուածոց, և դու ինքն մատնիս զքեզ ի ծառայութիւն յիմարաբար. Ո՞վ առնէ զմարդն ծառայ, եթէ ոչ մեղքն (և զայլս ըստ հաճոյիցդ): Ուրեմն եթէ կամիս տէր լինիլ, նմանեաց սրբոցն, և թէ կամիս ծառայել, հաւասարեաց անասոնց, և այլն: Ըստ այսմ և Ուկեբերանն ասէ ի ճառս, թէ՝ որովհետև կացուցաւ մարդն միայն տէր և իշխան ստեղծուածոց, վասն որոյ և իրաւամբ նոյնքն հարկադրեն և զմարդն և ահացուցմանբ միշտ ինչեն յականջու նորին առ ի հնազանդիլ և ճանաչել զստեղծողն իւրեանց: Քանզի քեզ ասէ Երկինն, ո՞վ մարդ, թէ՝ պայծառութեամբ լուսոյ աւուր և փայլմանբ արեգական վայելչանամ, և ի գիշերի հայելեաւ լուսնի. զի ընդ ? գործեսցես, և ի գիշերի հանգիցես: Վասն քոյ ժամանակք փոխաբերաբար հետևին զի ծանիցես զթի և զչափ իրաց. վասն քոյ տերևանան անտառք. դալարին դաշտքն, կանաչին բոյսքն, բղխըն աղբիւրքն, և ըստ կարգի ընթանան ամենայն արարածք: Ուրեմն՝ քեզ ասեն, թէ՝ մեք ի տեառնէ հրամայեցեալ եմք հնազանդիլ քեզ. ահա հպատակիմք և ծառայեմք քեզ, որ ես անհնազանդ և ապստամբ տեառն քոյ. ո՞վ ոք ես դու, որ հրամայես ստեղծուածոյս և վայելես, և դու հպատակիս հրամանի ստեղծողին. զտերունիսն վայելես և զտէրն ոչ ճանաչես: Երկիր ուրեմն ի համբերող տեառնէն, և զներիլն նորա՝ յապաշխարութիւն ածել համարեա, զի մի անկանիցիս ի դատաստան նորա՝ յորմէ ոչ ոք կարէ գերծանիլ (և այլն, որպէս կամիս): Ուրեմն որպէս ցուցաւ, մինչ այսքան փառօք և պերճ իշխանութեամբ հանդերձեալ էին զարդարեալ զմարդն, վասն որոյ առ ի ցուցանել զգերազանցութիւն նորա ի վերայ այլոց արարածոց՝ իբր խորհրդակցի և նախայիշի ասելով. արասցուք մարդ, և այլն: Արդ՝ արար Աստուած զմարդն ի հոգու յիմանալոյ և ի մարմնոյ զգալոյ, որով առաւել ևս յայտնիցէ զմեծ կարողութիւն իւր, զի զայսքան տարակացեալ բնութիւնս, զմարմինն և զանմարմինն, որ կարի իմն հեռացեալք էին ի միոյ

համազուգեաց ի մի բնութիւն կատարեալ: Դարձեալ՝ վասն զի ի յարարածս էր ստեղծուած իմն որ ունէր զՃանաչումն միայն իմացմանբ ի ներքս, որպէս հրեշտակք: Եւ էր, որ ունէր զՃանաչումն արտաքուստ զգայութեամբ միայն, որպէս անբանք, յաղազ որոյ առ ի կատարումն ընդ հնարին, պիտոյ էր ստեղծուած իմն, որ իցէր ճոխացեալ Երկոքումբքս, որպէս մարդու, որ ընթեռնուս զգիրս ունօղս զօրութիւն ներքոյ և արտաքոյ: Եւ դարձեալ գերազանցութիւն մարդոյս կայանայ ի յայս, զի սմա միայն վիճակեցաւ ընտրել զիամեստն և զանհամեստն. և ամաչել վասն աղտեղի գործոց. և կարգաւորել գիրս ըստ

կամօնաց բնականին: Այլև ամբառնալ զինքն իմացականաւն ի վեր առ Աստուած, և խոկալ զիմանալիսն, և ի ձայնս հեշտանալ զանց առնելով . որպէս և ձև կազմութեանն յայտ առնէ. զի ուղիղ ի վեր ձգտի, և ոչ կորածեւ ի վայր՝ որպէս անասնոց. վասն այսորիկ եթէ մարդ զձնովն իւրով զանց արարեալ կորացուցէ զինքն ի վայր յըստորև յաշխարհսյարելով, և ի սա հեշտանալով, ..... որպէս թէ՝ զպատիւ բնականութեանն և զկերպ մարդկութեանն մերկացեալ յինքենէ՝ առնու զկերպ և զյատկութիւնս անասնոց և նոցա հաւասարի. ըստ դրութեան մարդ ի պատուի էր, և այլն: Վասն որոյ և աղտեղագործքն կոչին անամօթք որպէս զանասունս: Դարձեալ՝ մարդս միայն ընկալաւ զչորեւին օգնականութիւնս զայսուսիչ. այսինքն՝ զխիղճ մտացն, որով կամիցի ուղղապէս: Չտրտնջականն, որով տրտնջաց ընդդէմ չարին և յորդորի առ բարին, զդիւրութիւնն իմացման, որով ձանաչիցէ զԱստուած զինքն և : Եւ զսէրն, որով բորբոքի առ ի սիրել զԱստուած ի վեր

քան զամենայն. և զընկերս, իբր զանձն: Այլև մարդն միայն ընկալաւ զերիս տեսակ աչս. այսինքն՝ զմարմնոյն, որով տեսանէ զերևելիս և զարտաքինս. զբնականին, որով տեսանէ զներքին և զաներևույթսն: Եվ զխոկմանն, որով զԱստուած տեսանէ: Քանզի աչօք մարմնոյն տեսանէ զայնս, որք են արտաքրոյ ինքեան: Աչօք բանականին տեսանէ զմիտսն, որ ի ներքս ի յինքն: Եւ աչօք խոկման տեսանէ զայնս, որք են ի վեր, քան զինքն. որ է Աստուած և Աստուածայինքն: Ուրեմն իաւի առ ի յայտնիլ զպատուականութիւն մարդոյս, ասաց՝ արացուք, և ոչ թէ եղիցի: Եւ թէ որպէս իցէ պատկեր Աստուծոյ, բազմադիմի ուսուցանեն քեզ սրբազան վարդապետք ի յոլով տեղիս (տես նիւսացւոյն գիրսն. ի վեցօրէիցն. և ի վանանդեցւոյ բանաստեղծութիւնսն և յայլս): Եւ մանաւանդ լինիլն, գիտելն և կամիլն. կամ թէ՝ կարելն, սիրելն և իմանալն մարդոյս ուսուցանեն քեզ զերանձնեայ տերութիւն և զեղաքուն Աստուածութիւնն ամենասրբոյ Երրորդութեանն (. զայլս այսպիսիս): Այլև միևնոյն անհատ մարդն, որպէս նմանի Աստուած, նոյնպէս և նմանի բոլորի աշխարհի և ի քաղաքավարութեան նորին ըստ բանաստեղծին Ղուկասու. քանզի հոգի մարդոյն է իբրև զկայսր բազմեալ ի ներքսագոյն պալատի: Անձնիշխան կամքն որպէս թագուիի ի նա յարեալ. միտքն՝ խորհրդականք կայսեր՝ սիրտն՝ մեծամեծք կայսեր. զգայարանքն՝ դատաւորք. և այլք անդամք մարմնոյն՝ որպէս ստորագրեցեալք և հրամանակատարք: Վասն զի միայն մարդն ասացաւ՝ պատկեր և նկարագիր Արարչին ամենայնի. վասն որոյ և այսպիսօք փառօք և գերազնութեամքք Ճոխացաւ. և առ այս արժանաւորեցաւ սպասաւորիլ և պաշտիլ յամենայն յարարածոց. յերկնաւորաց և յերկրաւորաց. որպէս և վկայէ Պողոս վասն իրեշտակաց, թէ՝ հովիւք և հարկաւորք, որք առաքին ի սպասաւորիլ, և այլն: Եւ վասն երկրաւորացս վկայէ Աստուած, և Դաւիթ՝ արացուք մարդ, զի իշխեսցէ: Եւ թէ՝ զամենայն ինչ հնազանդ արարէր և այլն: Եւ դարձեալ՝ գերազանցութիւն մարդոյս ոչ միայն երևի ի սկիզբն զորմէ մինչև ցայս վայր ձառեսցուք, այլ մանաւանդ երևի և ի վախճանն. քանզի ըստ հասարակ բանախօսից զձոոց մինչ չորք են պատճառք ամենայն իրաց. այսինքն՝ արարչական, նիւթական, տեսակական և վախճանական. յուստի և բոլորից արարածոյս, զորոց խօսեցուք, պատճառ արարչական էր Աստուած. նիւթականն էր ոչինչ, տեսակականն է տեսական երկնի և երկրի, և վախճանական՝ է բարին, ըստ այնմ, թէ՝ ետես Աստուած զամենայն բարին, ըստ այնմ, թէ՝

Ետես Աստուած զամենայն գոր արար՝ բարի են յոյժ: Արդ՝ ըստ ամենայնից, թէպէտ և մարդոյն վախճանն ասի բարին, սակայն յատկապէս ունեցաւ և զվախճան մի, այսինքն՝ Աստուածանալն յետոյ: Քանզի բոլոր ստեղծուածքս բոլոր յափտենականութեամբ թագուցեալք էին յոչընչութեան, և գաղափարաւն իւրեանց գոյին, ի միտս Աստուածոյ, և յետոյ ի ժամանակի յառաջ ածուն բնաւքն վասն մարդոյ, և մարդք միայն վասն Աստուածոյ, որպէս և յառաջ ևս ցուցաւ: Արդ՝ եթէ որպէս իցէ վախճանն մարդոյս Աստուածանալն, լուր զինչ ասէ Դիոնէսիոս երրորդութենէն փառաւորելոյ՝ զի՞նչ իցէր կամք ի յառաջ ածելն զբնականս ստեղծուած, այսինքն՝ զի փրկեսցի յօտարութենէ, և հեռացէ ի բաղադրութեանց և մարախլուտ էիցս, և խառնեսցի յաննիւթ և յամենապարզն յէտութիւն: Քանզի թէպէտ Աստուած արար զմեզ առանց մեզ ինքնիշխան կամօքն և ողորմութեամբն, սակայն ոչ արդարացուցանէ զմեզ առանց մեզ. զի զմեծ անձնիշխան ստեղծելով՝ երթող ապաստան ինչ ամս մեր, զի զորն կամհցիմք ի յայն հասանիցիմք, այսինքն՝ եթէ հեռանամք յաշխարհէս և յօտարութենէս սորին (որ յետոյ մուծաւ ի մեզ, զոր ոչ ունէաք ի բնէ, որ է մեղքն) յԱստուած միաւորիցիմք: Իսկ եթէ կամհցեմք յաշխարհի մնալ և զմելս սիրել, հեռացեալ ի բարւոյն ի չարն միաւորիցեմք: Վասն այսորիկ ասէ, թէ՝ փրկեսցի յօտարութենէ, և այլն: Նոյնպէս և յԱստուածաբանից ասի ի բազում ուրեք, թէ՝ ծայրագոյն բարին արար զբանական ստեղծուածն, զի բանականութեամբ ձանաչիցէ զգերազանց բարին. ձանաչելովն սիրիցէ, սիրելովն ստանայցէ և ստանալովն երանելի լինիցի: Այս է վախճան մարդոյ՝ քան զոր ոչ գոյ այլ բարեբաստագոյն երջանկություն է, անդ է պատառումն ամենայնից բարեաց և բարձումն ամենայնից չարեաց: Քանզի որպէս ցուցաւ, միայն զվախճան է մարդոյն ասի գոլ երանելի ի մէջ ստեղծուածոց, եթէ ըստ բանականութեանն կենցաղավարիցի: [Գի՞տ եւ զայլս, եւ ասա ըստ հածոյիցդ]: Արդ՝ եթէ այսքան եւ այսպէս պերճ փառօք եւ գերազանց աստիճանօք գտանի մարդ ի մէջ արարածոց, աննման եւ անհամենատ այլոցն, ուրեմն յոյժ յարմատապէս ասի ի բանաստեղծից, թէ՝ արդարև պանծալի, չնաշխարհիկ, բարի եւ ազնուագոյն պատկերի եւ հոգւոյն դիպեցաւ մարդս, որում չիք բնաւ նման ի ստեղծուածս: Կերջապէս բանականս այս մարդ մինչ ետես զինքն յամենայնի փոխացեալ, փառաւորեցեալ եւ գերազանցեալ, քան զամենայն, վասն որոյ իբրու շնորհակալ լիմելով զբարերար ստեղծողէն իւրմ՝ ասաց բերանովն Դաւթի, թէ՝ ընկալաք Աստուած, յիրաւի ընկալաք զողորմութիւն քո յատկապէս մեք ի մէջ ժողովրդեան քոյ. այսինքն՝ ի մէջ այլոց արարածոց քոց: Բաւականասցի ուրեմն այսքանս առ ողորմութիւնն Աստուածոյ. զոր նախապէս ընկալաք ի յարարչագործութեանն Աստուածոյ, ի ստեղծանելն զմեզ: Եւ յայսուիետեւ տեսցուք զերկրորդ ողորմութիւնն Աստուածոյ, որ ընկալեցեալ եղեւ ի ժամանակս նոյի, և զնա բարեբանեսցուք ըստ կարեաց:

Արդ՝ ի յանցանելն նախաստեղծիցն զպատուիրանս Աստուածոյ, և ի ընկալնուլն զԱնէծս ի յերկիր և յամենայն գործս, և ի յարտաքսիլն ի փառակենցաղ դրախտէն եւ յաքսորիին: Նոցա է վայրս յայս թշուառութեան, սկսաւ յափտենապէս լինիլ նուազումն բարեաց և յառաւելումն չարեաց. բուսանիլ օդինութեանց և արմատանալ անիծից, ստունզանում աստուածայնոց կամաց եւ ընդգրկումն իւրարուց հին թշնամոյ սատանայի. քանզի նա, որ մախացաւ ընդ ծնողսն, և խաբանօք յաղթահարեաց և արար ողորմելի, ոչ դադարեցաւ

այնուիետև ի հակազի ընդ ծնունդս նորա, որպէս և յիր սակաւուց անցելոց և գկայէն հաղթահարեալ արար ջրասոյզ. և զայլսն. այսպէս առնէ պարտականս պատժոց մինչեւ ի կատարած աշխարհի: Վասն այսորիկ մեղքն այն որ զբարերարն Աստուած բարկացոյց և ետ աքսորել զձեռնաստեղծէն իւր ի դրախտէն, և մահու գրաւիլ, նոյն չարն և ահա զնոյն Աստուածն զայրացուցեալ ետ պատժել գկայէն. և յետոյ զիակայսն հեղծուցանել ետ ի ջուրս: Եւ ոչ դադարեցաւ յայսպէս առնելոյ մինչև յախտեան: Քանզի հպարտութիւնն նախաչարին սատանայի ապստամբութենէ նախաստեղծիցն, եղբայրասպանութիւնն Կայենի, անզգամութիւն հսկայիցն, որք յառաջ քան զջրիեղեղն, և այլք այսպիսիք չարութիւնք և անկարգութիւնք, զորս մինչև ցայսօր պատժեաց Աստուած, պատժէ և պատժելոց է, ոչ այլ ինչ են, եթէ ոչ ծնունչ նոյնոյ նախաչարին Բելիրացի ապստամբութիւն յԱստուծոյ, և պատճառ բարկութեան նորին: Քանզի յամենայն ժամ, յամենայն ուրեք ոչ թողու Աստուած զայնպիսիսն առանց պատժոց, թէպէտ երեմնապէս թույլատրէ և յամենայն, առ ի զջումն գալ. զոր օրինակ՝ ասէ հոգեշունչ գիրն, թէ ետես տէր եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի յաւուրս արդարոյն նոյի. զի ամենայն ոք (ասէ) զամենայն աւուրս զչարիս խորհեր. և այլն: Զի թունալի գազանն այն, որ եղեն զթոյն իւր ի յԱղամ, և Կայէն, ոչ դադարեաց ի հեղլոյ և յամենայն ծնունդս նորա. ուստի որքան բազմացաւ մարդն ի վերայ երկրի, այնքան և յառաւելաւ չարութիւնքն ի թողունից չարին: Որոյ սակս ասի՝ ստորջացաւ Աստուած զի արար զմարդ. զի լցաւ ամենայն երկիր անիրաւութեամբ. վասն որոյ ջնջեցից զմարդ և զամենայն կենդանիս զորս արարի (և այլն): Քանզի թէպէտ միայն մարդն մեղանչէր և բարկացուցանէր զԱստուած, սակայն ընդ մարդոյն և զաշխարհ ամենայն կորուսանել սպառնաց. որոյ պատճառն է, զի մեղքն այնքան չար է, մինչ զի ոչ միայն զգործող ապականէ, այլև զկարգ և զեղանակս բոլորի աշխարհի տարալուծանէ և ապականէ. քանզի ի մեղանչեն մարդոյն արարածք ևս մեղանչեն ի ծառայելն նմա ի մեղս. զոր օրինակ՝ երկիր պէսպէս բարութեամբ և հեշտութեամբ յօրացուցանէ զմարդն. երկին ի լուսաւորիլն, ի պէսպէս յօգտութիւնս և յազդմունս ծառայէ. թռչունք ի զմայլեցուցանիլն և ի կերարկունիլն. նոյնպէս և այլք կենդանիք իրաքանչիրքն, և թէ անկենդանք՝ ըստ պիտոյից իրեանց լնուն զկարիս, և առնեն զնա անկարօս և գիրացեալ յամենայն պիտոյս մարմնական: Վասն որոյ հետևի, թէ գիրացաւ, ստուարացաւ և եթող զտէր իւր, և այլն: Ուրեմն որպէս են այլք արարածքի չարիս մարդոյ գործակից, յիրաւապէս լինիցին ընդ նմա ի պատիժս և պատժակիցս առ յայս միտ ի մեղանչիլն Աղամայ, պատժեցաւ ընդ նմա և երկիրն անիջիւք, որպէս բարկացելոյ ումեմն տալ զսուր: Ըստ Պողոսի ոչ միայն գործողքն, այլև որք զմնացեալքն լինին: Վասն այսորիկ ասէ՝ ջնջեցից զմարդ և զամենայն կենդանիս երկրի, և այլն: Զի ամենայն մարմին (ասէ) ապականեաց զճանապարհս իւր. և ապականեցաւ երկրի, և լցաւ անիրաւութեամբ. զոր սրբեցից հանդերձ իւրովք բնակողքն զրիեղեղաւ. և այլն: Ուր ասէ ոմն ի վարդապետաց, թէ՝ զրիեղեղն մարդոյ ծնաւ զջրիեղեղն ջուրց առ ի մաքրիլ զաշխարհս: Քանզի մարմինն մարդոյ եղև պատճառ ապականութեան հոգւոյ և բոլորի աշխարհի. և զի մարմինն է սկիզբն և տեղի հեշտութեան, յորմէ իբր յաղբերէ բոլիսին և յարձակին գետք ցանկութեանց և չար ախտից, և լայնապէս տարժանին և յորժանան, մինչ ընկղմի հոգին ընդ կառավարչին իւրոյ, որ է միտքն:

Ուրեմն եթէ կամիս ոչ ընկղմիլ յայս հեղեղ ցանկութեանց և յարձակմանց մարմնոյ. և դու ազատիցիս ի ջրհեղեղէ, որպէս նոյ իւրայնովքն, որք մտին ի տապանն: Ուրեմն որպէս ասացաք, մինչ ի թունից նախաչարին ապականեցաւ ամենայն երկիր և լցաւ անիրաւութեամբ անզգանաց, ասաց Աստուած ցնոյ, որ միայն գտաւ արդար առաջի աստուծոյ, ահա վախճան ամենայն մարդոյ հասեալ է առաջի իմ, զի բողոքէ չարութիւն մարդկանց, և ստիպէ զիս արդարութիւնն իմ կորուսանել զամենայն (և այլն, ըստ Սոլոմաց, և նինուէի): Ուրեմն ոչ ևս ներեցից. արա քեզ տապան, և առ քեզ զկին և զորդիս քոյ, և այլն: Արդ՝ մինչ էր Նոյ իին հարետ ամաց, սկսաւ կազմել զտապանն ըստ հրամանին Աստուծոյ, և մինչև ի վեց հարիւր ամն Նոյի հազի կատարեցաւ, ուր կարես մտածել զմեծութիւն և զորպիսութիւն տապանին, որ ի լրման ամին միոյ, Ճի, աւարտեցաւ շինումն, նաև զիամբերութիւնն և զիաւատն Նոյի՝ որ յայնքան ժամանակս աշխատեցաւ անձանձիր և սերտ հաւատով թարց Երկրայութեանց: Նաև մտածել ևս զլրբութիւն և զանզգանութիւն մարդկանց ժամանակին, որք բնակին ոչինչ զգաստացան, և ոչ զղացան, և ոչ երկեան: Արդարն Նոյ զամս բոլոր քարոզէր նոցա զգալուստ ջրհեղեղին, նոքա ծաղր առնէին, և յիմար կոչէին զնա: Փայտք անտառաց, որք պատրաստէին ի նիւթ տապանին, քարոզէին. անբան անասունքն և թևավոր թռչունքն ջոկք ջոկք եկեալ առ ի մտանել զտապանն՝ քարոզէին, բայց նոքա անզգամեալք զանց առնէին, և ոչ զղանային. Աստուածն ներօղ յորայգէր-? զշինումն տապանին և յամէր ի յածել զջուրն մինչև ամ բոլոր առ ի զղալ նոցա ի մեղաց, սակայն յիմարքն այնոքիկ խցեալք զականջս իւրեանց որպէս զիժ, ոչ լսէին, և ոչ զգուշանային երբէք. առ յասպիսիս ասէ Աստուած ըստ Եսայեայ. թանձրացաւ սիրտ ժողովրդեանց, զաշս իւրեանց կափուցին, զականջս իւրեանց, և այլն: Զի մեղքն կուրացուցանէ զաշս մտացն և խափանէ զիհմացականութիւնս մարդոյ, զի ոչ ճանաչից գարշելիութիւնն իւր. և դարձի ի մոլորութենէն: Ապա զի՞նչ, ի լնուլ ժամանակին և հասանիլ բարկութեանն Աստուծոյ, մինչ դեռ նոքա ուտէին, ընպէին ըստ Տեառն Բանին և այլն: Ոչինչ զգացին մինչև յօրն յորում Եմուտ նոյ ի տապանն, եկն ջրհեղեղն և կորուս զամենեսեան: Աստանօր նկատելի է վնաս և չարութիւնն մեղաց՝ թէ որպիսի անբուժելի իցէ. որքա՞ն ծանրագոյն և դժնդակագոյն իցէ. որպիսի՞ բուռն և զօրեղ իցէ, որ զայնքան և զայնչափ բազմութիւն կենդանեաց բոլորի աշխարհին, զբանականս և զանբանս, զթռչունս և զիետևակս, զընտանիս և զվայրենիս. նաև զանկենդան բոյսս և զտունկս. և գրէ, թէ գրոլոր գոյս Երկրի իսպառ կորոյս, ոչնչացոյց և հջոյց յանդունս մահու չարաչար խոստնամբ. միայն Նոյ և իւրացինքն կային զերծեալք, ի տապանին՝ մինչ էին ազատք ի գործոց կորուսելոյն: Յիրաւի կոչեն վարդապէտք կերպիւ իւիք զմեղքն ամենակարօղ. զի բոլոր թագաւորութիւնք Երկրի ժողովեցեալք ոչ կարեն զմի հոգի կորուսանել, բայց մի միայն մահացու մեղքն՝ ոչ միայն զիոգիս այնքան անհնոյ բազմութեան, այլև զմարմինն ջրահեղձ արարեալ՝ կորոյս և Եբարձ յերկրէ: (Տես ի յաղբիւր բարի գիրքն՝ որք վասն մեղաց գոն): (Նաև ի կոչումն ընծայութեան, և ի մոլութեանցն և զյալս յոլովս զոցես): Արդ՝ ո՞վ արար զայս սարսափելի գործ, եթէ ոչ ի նախաչարէն սատանայէ. և ո՞ւմ ընդդիմադրի, եթէ ոչ միոյ ծայրագումի բարւոյն և սրբոյն Աստուծոյ, որ զմեղս և զմեղաւորս այնքան ատէ, մինչ զիս յորդին իւր միածին ոչ խնայեաց մինչ Ետես ի նա զկերպարանս

այնքան ատէ, մինչ զիս յորդին իւր միածին ոչ խնայեաց մինչ Ետես ի նա զկերպարանս

մեղաւորի, թէպէտ էր ամենկին ազատ ի մեղաց և սրբիչ մեղաւորից: Իսկ Նոյ մինչ էր արդար և մաքուր, և ազատ ի գնացից կորուսելոյն ըստ վկայութեան ճշմարտութիւն, եղև փրկեցեալ իրովքն և պահեցեալ ի տապանին խնամօքն Նոյնոյ Աստուծոյ, առ ի լինիլ հայր և սկիզբն Երկրորդի աշխարհի ի նշան սիրոյ և հաշտութեանն Աստուծոյ առ մարդս, զոր ոչ իսպառ կամեցաւ կորուսանել և սպառնիլ. ըստ գրոյն, թէ՝ Նոյ այր արդար ի ժամանակի բարկութեան եղև հաշտարար: Նոյնպէս և Պողոս յերայեցիսն, և Պետրոս ի թուղթս իւր վկայէն զնմանէ գոլ արդար և սուրբ. քանզի գիտէ տէր զԱստուածապաշտս փրկել ի փորձութէնէ, և այն: Եւ մամաւանդ պահեաց զնոյ՝ քարոզ և զօրինակ արդարութեան իւրոյ ի յապագայս, իբր յամենայն ժամ զսուրբս փրկէ, և զչարսն պատժէ: Այսպէս և առ Ղովտ արար (և այլն տես): Դարձեալ՝ Նոյ յորժամ ծնաւ, հայրն սորա Ղամէք մարզարէարար կոչեաց զսա Նոյ, այսինքն՝ հանգիստ և մխիթարութիւն: Իբր ասելով, թէ՝ սա հանգուստ զաշխարհս ի յանօրէնութեանց և ի չարեաց, որովք լցաւ Երկիր և ապականեցաւ. որ ըստ քերթողահօրն յիրաւի հանգոյց Նոյ զերկիր բնակողքն հանդերձ և դադարեցոյց զչարութիւնս նոցա թաղելով զնոսա ի խորս անդնդոց ջրհեղեղաւ: Երկրորդ՝ եղև Նոյ հանգիստ և մխիթարութիւն Երկիր հեշտութեան և խաղաղութեան միջնորդ լինելով, և առնլով ի տեառնէ զնշանն յաւիտենականք զուլեղն, ոչ ևս ջնջել զերիր: Նաև Վերստին լնլով զերկիր ամենայնիւք մարդկամբք և ամենայն կենդանեօք: Այլև՝ եղև հանգիստ և մխիթարութիւն բոլորի աշխարհի, զի Վերստին աճելով, ի ծնունդս մարդկան, յորոց և զաւակէն ծնաւ Քրիստոս, որ և ճշմարիտ հանգիստ և մխիթարութիւն եղև աշխարհի վերանորոգելովն զկորուսեալն. ըստ այնմ, թէ՝ Եկայք առ իս ամենայն աշխատեալք, և այլն: Որոյ և զօրինակն իսկ եցոյց Աստուած ի յաղեղն ի յաման տպելով. որ նոյն Քրիստոս ի սուրբ կոյսն Եղեալ տպեցաւ և Երևեցաւ աշխարհի ի նշան հաշտութեանն Աստուծոյ ընդ մարդկան. և այլն: Դարձեալ տապանն բերէր զօրինակն Եկեղեցւոյս Քրիստոսի որ յինքեան ունելով զզանազան այլասեռ մարդս, փրկէ ի ջրհեղեղէ գեհենոյն: Ուրեմն որպէս արտաքոյ տապանին Եղեալքն կորեան և ի ներքս Եղեալքն փրկեցան, նոյնպէս և որք ի ծոց Եկեղեցւոյս կան և ի սա դիմեն, ապրին, և այլքն ոչ (և այլն այսպէս): Եւ Վերջապէս ի ցացնով բարկութեանն Աստուծոյ, և ի դադարիլ ջրհեղեղին, յելանելն Նոյի ի տապանէն հրամանաւ Աստուծոյ, ետես զամենայն Երկիր ապականեալ, և ինքն միայն մնացեալ իւրացնօքն, կազմեաց զեղան, և մատոյց զզիս Աստուծոյ, և հաշտեցոյց զԱստուած Դ աշխարհի, և էառ Վերստին զօրինութիւն յԱստուծոյ, և յորժամ զայսքան բարերարութիւնս տեսեալ Նոյի, զոհացաւ Աստուծոյ, և ասաց. ընկալաք Աստուած, զողորմութիւն քո: